


## Հայաստանի Հանրապետություն 1918-2015

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՆԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԵՐ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ



# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արեւմտյան Հայաստան.....	15
3- Միյուռք.....	25
4- Հասարակական.....	26
5- Խոհեր.....	33
6- Գծանկարչություն.....	34
7- Առածանի.....	34

## Պարսկերեն բաժին

1- Հայերի դերը Օսմանական թուրքիայում.....	0
2- Լուրեր.....	1-2



Ճապիկի առաջին էջում՝ ՀՀ 1918-2015

Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 196, Փետրվար 2015 թ.

No. 196, February 2015

ماهنامه لویس - شماره ۱۹۶ اسفند ماه ۱۳۹۳

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : louys\_monthly@yahoo.com**

**Internet : www.louysonline.com**

**Թերթի Գինը՝** Հատվածաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

# ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՎԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻԳԻ


## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՋԱԿԱԳԻՐ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստի ավարտից հետո Նախագահ Սերժ Սարգսյանը հանձնաժողովի անդամների և ընդլայնված նիստի մասնակիցների հետ այսօր այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ծաղկեպսակ դրել Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշարձանին և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին: Պետական հանձնաժողովի անդամներն այնուհետև ծանոթացել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նոր ցուցադրության նախապատրաստման աշխատանքների ընթացքին:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում տեղի է ունեցել նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի հրապարակման արարողությունը: Հռչակագիրն այսօր միաձայն ընդունվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստում: Փաստաթուղթն ընթերցել է Նախագահ Սերժ Սարգսյանը և ի կատարումն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի որոշման, հռչակագրի մայր օրինակը ի պահ է հանձնել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին: Հանրապետության Նախագահը նշել է, որ հռչակագրի մեկ օրինակը կուղարկվի Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, մեկ օրինակը կհանձնվի Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ:

\*\*\*

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ՝  
- արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,  
- հենվելով 1990 թվականի օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վրա,  
- վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի համաձայն «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության եւ հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է»,



## Հայաստան



### ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԿ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԳԱՅԻՐ

- ղեկավարվելով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96(1) բանաձևի, 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թվականի նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի և մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով և դրույթներով,

- հաշվի առնելով, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ-ը հատուկ կարևորել է այդ հանցատեսակի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը,

- շեշտելով ցեղասպանության հանցակազմում պարունակվող արարքների համար անպատիժ մնալու անթույլատրելիությունն ու այդ հանցագործության վաղեմության ժամկետ չունենալու հանգամանքը,

- դատապարտելով 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը,

հայրենագրվումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես

հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք,

- համարելով նաև 1919-1921 թվականներին Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական և մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները եղելության իրավական գնահատական,

- արժևորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն» որակումը և օսմանյան

իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10-ի Մերի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում.

1. Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև:

2. Վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար:

3. Ծնորհակալություն է հայտնում այն պետություններին, միջազգային, կրոնական և հասարակական կազմակերպություններին, որոնք քաղաքական խիզախություն ունեցան ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված սոսկալի ոճրագործություն, և այսօր էլ շարունակում են այդ ուղղությամբ իրավական քայլեր ձեռնարկել, նաև կանխել ժխտողականության վտանգավոր դրսևորումները:

4. Երախտագիտություն է հայտնում այն ազգերին, կառույցներին և անհատներին, ովքեր հաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնույթ օգնություն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջև կանգնած բազմաթիվ հայերի, ապահով և խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանությունից վերապրած հայության համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունեությանը և միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին, միջազգային կազմակերպություններին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից, միավորել իրենց ջանքերը պատմական արդարությունը վերականգնելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար:

6. Արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և

միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետևանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի գոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից:

Զորակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակության այն հատվածին, որի ներկայացուցիչներն այսօր արդեն համարձակություն են դրսևորում այդ հարցում՝ ի հակադրություն իշխանությունների պաշտոնական դիրքորոշման:

9. Հուլյա է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

10. Հպարտությամբ է արձանագրում, որ ցեղասպանությունից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարյուրամյակի ընթացքում՝

- դրսևորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցություն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականությունը,
- պահպանեց և զարգացրեց ազգային արժեքները, հասավ ազգային մշակույթի, գիտության և կրթության վերածննդի՝ ուրույն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգության զարգացման գործում,
- ստեղծեց Հայկական Միությունի հոգևոր և աշխարհիկ կառույցների հզոր և արդյունավետ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփյուռ հայ համայնքներում հայապահպանության, հայի՝ հարգանք և համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանը,

- համազգային գործակցության և հայրենադարձության ընդարձակ ծրագրով համախմբեց և վերստեղծեց ցեղասպանության հետևանքով վերացման վտանգի առջև հայտնված ազգային գենոֆոնդը,

- Առաջին և Երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգության և խաղաղության հաստատման գործում, փառավոր հաղթանակներ տարավ Սարդարապատի և Արցախյան հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը որպես կարևոր հանգրվան պատմական արդարության համար մղվող պայքարը «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասեր, գիտակից և ուսյալ կեցվածքով պաշտպան

կանգնել հայրենի սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայել հանուն՝

- առավել հզոր Հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության,
- անկախ Արցախի առաջընթացի ու զորացման,
- աշխարհասփյուռ հայության գործունե համախմբման,
- համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման:

29 հունվարի 2015թ., ք. Երևան

## Հակասություն կա Ցեղասպանության հռչակագրի և ցյուրիխյան արձանագրությունների միջև

11.02.2015



Հայոց ցեղասպանության հռչակագրի եւ դեռեւս Հայաստանի Հանրապետության ստորագրությունը կրող ու Հայոց խորհրդարանի օրակարգում գտնվող հայ-թուրքական արձանագրությունների միջև առկա է հակասություն: Այս մասին նշել է ԲՀԿ խմբակցության պատգամավոր, Հայաստանի ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը՝ անդրադառնալով այդ հռչակագրի վերաբերյալ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի դիտարկումներին:

Օսկանյանը մասնավորապես, նշել է.

«Հատկանշական են Տեր-Պետրոսյանի դիտարկումները Ցեղասպանության ճանաչման եւ պահանջատիրության՝ հռչակագրում տեղ գտած դրույթների մասին, որոնք եւ անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի գաղափարական ընկալման, ինչպես նաեւ Հայաստանի արտաքին քաղաքականության հետ:

Այստեղ կա մի շատ ավելի խորը խնդիր, որը վերաբերում է հռչակագրի եւ դեռեւս Հայաստանի Հանրապետության ստորագրությունը կրող ու Հայոց խորհրդարանի օրակարգում գտնվող հայ-թուրքական արձանագրությունների միջև առկա հակասությանը:

Շատերը համոզված էին, որ հռչակագրի հրապարակմանը զուգահեռ ոչ միայն խորհրդարանից հետ կկանչվեին արձանագրությունները, այլև դրանցից ընդհանրապես հետ կվերցվեին Հայաստանի ստորագրությունները:

Այդ երկու փաստաթղթերի միջև առկա հակասությունները, մեղմ ասած՝ թուլացնում են հռչակագրում տեղ գտած Հայոց ցեղասպանության ճանաչման եւ պահանջատիրության հարցերի հաստատումը՝ անկախ նրանից, թե ինչ կարծիքի ենք հռչակագրում դրանք բարձրացնելու նպատակահարմարության մասին:

Եթե արձանագրությունները վավերացվեին երկու երկրների խորհրդարանների կողմից, միջազգային իրավունքի տեսանկյունից դրանք ստանալու էին իրավական լրջագույն արժեք՝ ձեռք բերելով պայմանագրի կշիռ:

Քանի դեռ Հայաստանի Հանրապետության ստորագրությունը՝ թեկուզ չվավերացված, մնում է այդ արձանագրությունների տակ, Հայոց ցեղասպանության ճանաչման եւ պահանջատիրության հարցում Հայաստանի արտաքին քաղաքական դիրքորոշումները առավելապես պայմանավորվում են այդ դրույթներով:

Մի կողմից Հայաստանը ուժի մեջ է թողնում արձանագրությունների՝ «պատմական փաստաթղթերի եւ

արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն» իրականացնելու նպատակով ենթահանձնաժողով ստեղծելու մասին, ինչպես նաև «երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը» դրույթները:

Մյուս կողմից՝ հռչակագրում շեշտադրում է «1920 թվականի օգոստոսի 10-ի Մեռի հաշտության պայմանագրի եւ 1920 թվականի նոյեմբերի 22-ի ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը եւ նշանակությունը Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում», ինչպես նաև «կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչել եւ դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը»:

Այս դիրեման Հայաստանի իշխանությունների համար լուրջ մարտահրավեր է»:

Նշենք, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն անդրադառնալով Յեղասպանության հռչակագրին մի շարք դիտարկումներ էր արել: Մասնավորապես, նա նշել էր, որ որեւէ փաստաթուղթ չի կարող արտահայտել «համայն հայության կամքը», նվաստացուցիչ էր համարել Յեղասպանությունը ճանաչելու համար օտար երկրներից շնորհակալություն խնդրելու փաստը, կաղ-վերջնագիր է համարել Յեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ Թուրքիային ուղղված կոչը: «Քանի՜ անգամ պետք է ասել, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ թե մեր՝ հայերիս, այլ իրենց՝ թուրքերի գործն է: Այս առթիվ ավելորդ չեմ համարում հիշեցնել իմ ելույթներից մեկի հետեյալ հատվածը. «Ժամանակն է վերջապես հասկանալ, որ վերջնագրեր ներկայացնելով կամ անկյուն սեղմելով, ոչ ոք չի կարող Թուրքիային պարտադրել՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը»,-գրել է Տեր-Պետրոսյանը:

Նա նաև անհերթել է համարել «պատմական արդարություն» եզրի օգտագործումը հռչակագրում, քանի որ այն «առանձգական ու վերացական» տերմին է, որը չկա միջազգային իրավունքում:

«Մի խոսքով՝ հրապարակ է հանվել քաղաքական առումով եթե ոչ անպայման վտանգավոր, բայց առնվազն անպտուղ մի փաստաթուղթ, որն ամենեւին պատշաճ չէ 100-ամյակի առթիվ Հայոց ցեղասպանության հարցը միջազգային ասպարեզում ըստ էության արժարժելու խիստ անհրաժեշտ նպատակադրությամբ: Մինչդեռ եթե Յեղասպանության խնդիրը դիտվեր բացառապես մարդու իրավունքների, մարդկության դեմ գործված հանցագործության եւ հայ-թուրքական հաշտեցման անհրաժեշտության համատեքստում, ապա հռչակագիրը կարող էր ոչ միայն համաշխարհային լայն արձագանքի արժանանալ, այլևս դրական քաղաքական հետեւանքներ ունենալ թե՛ Հայաստանի, թե՛ Լեւոնյանի Ղարաբաղի համար»,-ամփոփել է նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Լեւոն Տեր-Պետրոսյան. Խոհեր «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» հրապարակման առթիվ



Ստորև ձեզ ենք ներկայացնում «Հայ ազգային Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի հեղինակած հոդվածը՝ նախատեսված բացառիկ լույս ընծայման համար iLur.am կայքում եւ «Չորրորդ Իշխանություն» թերթում:

Վերջին շրջանում տեղի ունեցած բուռն իրադարձությունների՝ Գյումրու ողբերգության, Բերձորի բարբարոսության եւ փոքր ձեռնարկատիրության ներկայացուցիչների տպավորիչ ընդվզման պատճառով «Յեղասպանության 100-րդ տարելիցի հռչակագիրը», կարելի է ասել, լիակատար անուշադրության մատնվեց, մինչ այլ հանգամանքներում այն, անտարակույս, հասարակական լայն արձագանքի կարժանանար: Լրացնելու համար այդ բացը, կցանկանայի որոշ դիտողություններ ու մտահոգություններ արտահայտել հռչակագրի բովանդակության վերաբերյալ՝ ոչ ամենեւին որեւէ մեկին մեղադրելու կամ խնդիրը ներքաղաքական շահարկումների առարկա դարձնելու մտադրությամբ, այլ բացառապես այդ կարեւոր փաստաթղթի բնագիրը բարելավելու նպատակով:

1. Հռչակագրի առաջին իսկ պարբերության մեջ արձանագրվում է, որ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնաժողովների հետ», արտահայտում է «հայ ժողովրդի միասնական կամքը» (նույն միտքը կրկնվում է նաև հռչակագրի 6-րդ կետում): Ես չեմ պատկերացնում, թե ինչպես «Յեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող» գուտ կազմակերպական բնույթի մի հանձնաժողով, որքան էլ ներկայացուցչական, կարող է արտահայտել հայ ժողովրդի միասնական կամքը: Եվ ընդհանրապես, գոյություն ունի՞, արդյոք, մի մարմին, որն այդ կամքը կարող է արտահայտել: Դժբախտաբար թե բարեբախտաբար, որեւէ մարմին կամ կառույց համայն հայության անունից չի կարող խոսել: Հայաստանի եւ Ղարաբաղի նախագահներն իրավունք ունեն խոսել միայն իրենց երկրների կառավարությունների, եկեղեցու առաջնորդները՝ սեփական իրավագործության ենթակա համայնքների, իսկ քաղաքական եւ հասարակական կազմակերպությունները՝ իրենց համագումարների անունից: Ողջ հայ ժողովրդի՝ իրավական ուժ ունեցող միասնական կամքը կամ կարծիքը կարող է արտահայտել միայն համահայկական հանրաքվեն, որի կազմակերպումը, հասկանալի պատճառներով, անհնար է: Հռչակագիրը ոչ թե հրապարակախոսական կամ քաղաքական մանիֆեստ է, այլ իրավական փաստաթուղթ, ուստի պետք է միանգամայն համարժեք լինի իր բնույթին:

Քանի որ այն առաջին հերթին ուղղված է միջազգային հանրությանը, ապա բացառված չէ, որ այդ հանրությունից որեւէ մեկը կարող է հարցնել. «Իսկ որտեղի՞ց գիտեք, թե դուք արտահայտում եք հայ ժողովրդի միասնական կամքը»: «Մի՞թե պարզ չէ» կամ «ինքնբերական հասկանալի է» տիպի պատասխանները միայն քմիծաղ կառաջացնեն: Հետեւաբար, հռչակագիրը շատ ավելի ծանրակշիռ նշանակություն ձեռք կբերեր եւ յրջագույն իրավական-քաղաքական փաստաթղթի արժեք կունենար, եթե համայն հայության անունից խոսելու հավակնություն ունեցող մի անդամ հանձնաժողովի փոխարեն, հրապարակվեր Հայաստանի եւ Լեւոնյանի Ղարաբաղի նախագահների, Ամենայն Հայոց կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, ինչպես նաև՝ Հայ Կաթողիկե եւ Հայ Ավետարանական եկեղեցիների առաջնորդների ստորագրությամբ:

2. Հռչակագրի 3-րդ կետում համակարգող հանձնաժողովի կողմից շնորհակալություն է հայտնվում «այն պետություններին, միջազգային, կրոնական եւ հասարակական կազմակերպություններին, որոնք քաղաքական խիզախություն ունեցան ճանաչելու եւ դատապարտելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված սոսկալի ոճրագործություն, եւ այսօր էլ շարունակում են այդ ուղղությամբ իրավական քայլեր ձեռնարկել, նաև կանխել ժխտողականության վտանգավոր դրսևորումները»: Մա ոչ այլ ինչ է, եթե ոչ հայ ժողովրդին նվաստացուցիչ վիճակի մեջ դնող գավառամտության արտահայտություն: Յեղասպանության ճանաչումն ու դատապարտումը որեւէ պետությունից կամ միջազգային կազմակերպությունից խիզախություն չի պահանջում, քանի որ մարդկության դեմ ուղղված այդպիսի ոճրագործությունների ճանաչումն ու դատապարտումը միջազգային կոնվենցիաներով ամրագրված նրանց պարտավորությունն է, որի կատարման համար շնորհակալության արժանանալը նույնիսկ վիրավորական պետք է լինի նրանց համար: Նման կարգի շնորհակալական գեղումները որքան բնական են սփյուռքահայ համայնքներին

լրբիստական ուղերձների պարագայում, նույնքան խոտելի են պետության անուրից արվող հայտարարությունների համար:

Մի այլ նկատառումով անհարկի պետք է համարել նաև հոչակագրում ընդգրկված այն դրույթը (8-րդ կետ), որով Յեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից գորակցություն է արտահայտվում «Թուրքիայի քաղաքացիական հասարակության այն հատվածին, որի ներկայացուցիչներն այսօր արդեն համարձակություն են դրսևորում այս հարցում՝ ի հակադրություն իշխանությունների պաշտոնական դիրքորոշման»: Թուրքիայի այդ քաղաքացիները, քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգի տակ, իրոք մեծ համարձակություն են դրսևորում՝ Հայոց ցեղասպանության փաստն ընդունելով, բայց հայկական կողմի գորակցությունն, իմ կարծիքով, ոչ թե կօգնի, այլ հակառակը, կվնասի նրանց՝ երկրի իշխանություններին ու հետադիմական ուժերին պատրվակ տրամադրելով նրանց ներկայացնելու որպես օտար շահերի ծառայող տարրեր:

3. Իսկ արդեն բոլորովին արտառոց ու անլուրջ է հոչակագրի նույն կետի մյուս դրույթը, որը Թուրքիայի հանրապետությանը կոչ է անում «ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի գոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից»: Ինչ է սա, եթե ոչ Թուրքիային ուղղված վերջնագիր, այն էլ՝ կաղ-վերջնագիր, քանի որ նրանում բացակայում է վերջնագիր հասկացության մյուս պարտադիր բաղադրիչը, այսինքն՝ թե ինչ է սպասվում հասցեատիրոջը՝ վերջնագրի պահանջը չկատարելու դեպքում: Չարմանալ կարելի է, թե այս անհեթեթությունն ինչպես է տեղ գտել մի այնպիսի կարևոր փաստաթղթում, որպիսին իրականում պետք է լիներ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հոչակագիրը»:

Քանի՞ անգամ պետք է ասել, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ թե մեր՝ հայերիս, այլ իրենց՝ թուրքերի գործն է: Այս առթիվ ավելորդ չեմ համարում հիշեցնել իմ ելույթներից մեկի հետեյալ հատվածը. «Ժամանակն է վերջապես հասկանալ, որ վերջնագրեր ներկայացնելով կամ անկյուն սեղմելով, ոչ որ չի կարող Թուրքիային պարտադրել՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բոլորովին չեմ կասկածում, որ Թուրքիան վաղ թե ուշ անելու է այդ բանը: Բայց դա տեղի է ունենալու ոչ թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից առաջ, այլ մեր երկրների միջև բարիդրացիության և վստահության մթնոլորտի ձևավորումից հետո: Հետևաբար, զգացմունքները մի կողմ թողնելով, այդ հարաբերությունները պետք է կառուցել մեկնելով այն իրողությունից, որ 1915 թվականի իրադարձությունները Հայաստանը համարում է Յեղասպանություն, իսկ Թուրքիան՝ ոչ» (08.12.2007թ. «Աերադարձ», էջ 115): Թուրքիային սեփական պատմությանն առերեսվելու կոչ կարող են անել և անում են աշխարհի մյուս պետությունները, բայց Հայաստանը որևէ պարագայում իրավունք չունի նույն բանն անելու, որովհետև դա նախ՝ հարվածում է իր արժանապատվությանը և երկրորդ՝ ամենեւին չի նպաստում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը:

4. Իսկ այժմ հոչակագրի հարուցած ամենամտահոգիչ խնդրի մասին: Գնահատելի է, որ փաստաթղթի հեղինակները խուսափել են հայկական հրապարակախոսության մեջ չափազանց տարածված «պատմական իրավունք» եզրույթի գործածությունից, քանի որ նախ՝ դրանից ավելի առաձգական հասկացություն գոյություն չունի, որովհետև յուրաքանչյուր ազգ պատմական իրավունքը յուրովի է ընկալում, և երկրորդ, որ ավելի կարևոր է, այդպիսի հասկացություն գոյություն չունի նաև միջազգային իրավունքի մեջ: Դրա հետ մեկտեղ, սակայն, զարմանալիորեն «պատմական իրավունք» եզրույթը հոչակագրում փոխարինվել է «պատմական արդարություն» նույնքան առաձգական և ավելի վերացական հասկացությամբ, որը վերջինիս ընկալում օգտագործված է երկու անգամ: Թե ինչ նկատի ունեն հեղինակները այդ հասկացության տակ, լիովին պարզվում է հոչակագրի հետեյալ խտացված ձեւակերպումների միջոցով. «1920թ. օգոստոսի 10-ի՝ Մեւրի հաշտության պայմանագրի և 1920թ. նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ

նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում» և «անհատական, համայնքային և համագային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ»: Այլ կերպ ասած, հոչակագրում ընդգրկված է Հայ Դատի ներկայիս հասկացողության ողջ ռեպերտուարը՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում և դատապարտում, Արեւմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մնացյալ վայրերում 1915 թվականին բնակված հայերի հետնորդներին հասանելի նյութական և բարոյական վնասների հատուցում, անհատական և համայնքային (եկեղեցապատկան) սեփականությունների վերականգնում, հայերի գանգվածային վերաբնակեցում իրենց նախնիների հայրենի օջախներում և վերջապես՝ Հայաստանի տարածքի ընդարձակում Մեւրի դաշնագրի և ԱՄՆ նախագահ Վիլսոնի գծած սահմաններով:

Մի կողմ դրած այն հարցը, թե անհատական և համայնքային իրավունքների վերականգնումից բացի, որքանով է իրականանալի այս «բաղձալի» ծրագիրը, ցանկանում եմ արձանագրել միայն հետեյալը: Եթե 1998 թվականից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում դրված էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը, որի դիմաց մեր երկիրն ստացավ հայ և թուրք պատմաբանների հանձնաժողով ստեղծելու պարտադրանքը, ապա «Յեղասպանության 100-րդ տարելիցի հոչակագրի» ուժով Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում արդեն դրվում է պահանջատիրության հարցը: Թե ինչպիսի հետեւանքների կարող է հանգեցնել այս կտրուկ շրջադարձը, միայն Աստված գիտե, իսկ ներկա պահին ընդամենն ակնհայտ է, որ դա չափազանց կարողացնի ու երկար ժամանակով կատեցնի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման՝ Հայաստանի ապագայի համար խիստ անհրաժեշտ գործընթացը:

5. Մի խոսքով՝ հրապարակ է հանվել քաղաքական առումով եթե ոչ անպայման վտանգավոր, բայց առնվազն անպտուղ մի փաստաթուղթ, որն ամենեւին պատշաճ չէ 100-ամյակի առթիվ Հայոց ցեղասպանության հարցը միջազգային ասպարեզում ըստ էության արժարժելու խիստ անհրաժեշտ նպատակադրությանը: Մինչդեռ եթե Յեղասպանության խնդիրը դիտվեր բացառապես մարդու իրավունքների, մարդկության դեմ գործված հանցագործության և հայ-թուրքական հաշտեցման անհրաժեշտության համատեքստում, ապա հոչակագիրը կարող էր ոչ միայն համաշխարհային լայն արձագանքի արժանանալ, այլև դրական քաղաքական հետեւանքներ ունենալ թե՛ Հայաստանի, թե՛ Լեռնային Ղարաբաղի համար:

100-ամյա տարելիցը հարմարագույն առիթն էր Յեղասպանության խնդիրը զգացականության դաշտից վերջապես քաղաքական մտածողության դաշտ տեղափոխելու համար: Հետևաբար բոլորովին չեմ խանգարի, եթե խնդրո առարկա հոչակագիրը հիմնովին վերախմբագրվելով, համապատասխանեցվել միջազգային իրավունքի նորմերին և պետությունների ու ժողովուրդների համակցության սահմանված կանոններին: Որպես պետություն՝ մենք ուրիշ լեզվով աշխարհի հետ խոսելու իրավունք չունենք:

Եւ վերջապես, բացի այս ամենից, հարկ է արձանագրել, որ «Յեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը» ակնհայտորեն գերազանցել է իր իրավասությունները՝ կոպտորեն խախտելով «Հայաստանի անկախության մասին հոչակագիրն» ու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որոնք, բացի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն աջակցելու դրույթից, Հայ դատի կամ պահանջատիրության որևէ այլ տարր չեն պարունակում:

## Հայոց ցեղասպանության հոչակագիրը հաջող փաստաթուղթ է. Արման Նավասարդյան

11.02.2015

Հայոց ցեղասպանության հոչակագիրը հաջող փաստաթուղթ է: Այս մասին այսօր՝ փետրվարի 11-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է արտակարգ և լիագոր դեսպան, «Diplomat.am» կայքի ղեկավար Արման

Նավասարդյանը: Նրա խոսքով՝ հռչակագիրը միտված է ապագային: Նրա խոսքով՝ ՀՀ դիվանագիտությունը պետք է այդ փաստաթուղթը դնի միջազգային հարաբերությունների հիմքում:



Դիվանագետը նկատեց, որ նման փաստաթղթից հետո Թուրքիան կաստկացնի իր մոտեցումները: «Թուրքիան ունի այնպիսի խամանիկ պետություն, ինչպիսին Ադրբեջանն է, եւ սա մեզ պետք է զգուշավորության դրդի», - նշել է նա՝ հավելելով, որ Թուրքիան կարող է օգտագործել իսլամական պետությունը նաեւ Հայաստանի դեմ: Անդրադառնալով հայ-թուրքական արձանագրություններին, Նավասարդյանը ընդգծել է, որ դրանք պետք է հետ կանչել: Նա նշել է, որ վերջին 5 տարիներին Յեղասպանության հարցում ձեռքբերումներ գրեթե չկան, ինչը մտահոգիչ է:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## «Հյուսիս-հարավ» նախագծի առաջին հատվածը պատրաստ է

11.02.2015



Հայաստանի հյուսիսային դարպասը հարավայինին կապող ռազմավարական մեծ նշանակությամբ ավտոճանապարհի Երեւան-Արտաշատ, Երեւան-Աշտարակ հատվածի 31 կմ երկարությամբ բետոնե ծածկն արդեն ամբողջությամբ պատրաստ է: Տրանսպորտի նախարարությունից հայտնում են, որ սա «Հյուսիս-հարավ» հսկայի 4 մասերից՝ տրանշներից առաջինն է: Այստեղ, իհարկե, դեռ կիսատ մնացած աշխատանքներ կան՝ մասնավորապես Մարմարաշեն եւ Բուրաստան համայնքների

համար կկառուցվեն վերգետնյա անցումներ. նախագծերն արդեն պատրաստ են, առաջիկայում կմեկնարկեն համապատասխան մրցույթները: Արդիականացվելու են նաեւ առկա անցումները՝ համապատասխանեցնելով առաջին դասի ճանապարհի պահանջներին:

Այս տարվա ավարտին տրանշ մեկը լիարժեք շահագործման կհանձնվի երթուկայանի համար՝ ներառյալ արհեստական կառույցները:

Տրանշ 1-ի աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու համար «Կորսան Կորվիամ» իսպանական շինարարական ընկերության հետ կնքվել է 70.4 մլն. դոլարի պայմանագիր. այս պահին իրականացվել է 47 մլն. դոլարի աշխատանք: Առաջիկայում երթուկայանը կտեղափոխվի աջակողմյան հատված՝ ճանապարհի ձախ մասում կահավորման, ինչպես նաեւ նկատված թերությունների վերացման եւ որոշ աշխատանքների վերակատարումն իրականացնելու նպատակով:

Աշտարակ-Թալին: Սա ճանապարհային միջանցքի 2-րդ տրանշն է: Երկարությունը 42 կմ: Հայտնի է, որ այս հատվածով է անցել ավելի քան 7 հազար կիլոմետր երկարությամբ ձգվող Մետաքսի ճանապարհը: Այս տարածքում հայկական հնագույն քաղաքներ են եղել. փաստում են հայ հնագետները, ովքեր 2013-ից այստեղ պեղումներ են իրականացնում: Աշխատանքները կատարվում են «Հյուսիս-հարավ» ծրագրի ֆինանսավորմամբ. նոր ճանապարհը չպետք է հաստ բետոնե շերտի տակ թողնի պատմական փաստացի ապացույցները. սա ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունն է:

Վերադառնալով տրանշ 2-ին նշեց, որ բետոնե ծածկի փոման աշխատանքները կմեկնարկեն եղանակների տաքանալուն պես. ճանապարհը պատրաստ կլինի 2017-ի սկզբում: Այս հատվածի շինարարական աշխատանքների պայմանագրային գինը կազմել է 179.6 մլն ԱՄՆ դոլար, որից այս պահին տրամադրվել է 18 մլն-ը:

Տրանշ 1-ի եւ 2-ի համար, «Հյուսիս-հարավ» մեկնարկի սկզբից, գումարային տեսքով իրականացվել է 65 մլն ԱՄՆ դոլարի աշխատանք:

Շուտով կհայտարարվեն մրցույթներ տրանշ 3-ի՝ Թալին-Լանջիկ եւ Լանջիկ-Գյումրի հատվածների շինաշխատանքներն իրականացնելու համար: Համապատասխանաբար շուրջ 18.7 եւ 27.5 կմ երկարությամբ ճանապարհների նախագծերն արդեն կան, տրվել է նաեւ համալիր փորձաքննության եզրակացությունը:

Կառավարությունը եւս արել է իր առաջարկությունները: Այս պահին վերջնականացման փուլում են մրցույթային փաստաթղթերը, որ ներկայացվելու են ծրագրի համաֆինանսավորողներ Ասիական զարգացման բանկի եւ Եվրոպական ներդրումային բանկի հաստատմանը, ինչպես նաեւ հրապարակվելու են համապատասխան կայքերում եւ միջազգային բիզնես ամսագրերում. «Այնպես էնք տեղական, միջազգային ընկերությունների արձագանքը, որոնք կունենան համապատասխան տեխնիկական հզորություններ համապատասխան մրցույթային փաստաթղթերի: Եվ ունենալով արդեն հաղթող կազմակերպություն, կմեկնարկեն նաեւ այդ տրանշի շինաշխատանքները», - տեղեկացրեց «Հյուսիս-հարավ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Մարգարյանը:

Տրանշ 4-ի՝ Արտաշատ-Քաջարան-Ազարակ հատվածի կառուցման ուղղությամբ եւս ակտիվ աշխատանքներ են ընթանում: Վերջնական տեսքի է բերվում նախագիծը, կատարվում են ուսումնասիրություններ: Այս հատվածում առաջին անգամ անկախ Հայաստանի պատմության ընթացքում նախատեսվում է կառուցել ճանապարհային թունել: Երկարությունը՝ 4.7 կմ, կառուցման վայրը՝ Քաջարանից Մեղրի տանող հատվածում՝ 2400 մ բարձրությամբ լեռան ստորոտում: Ի դեպ, հենց այդ լեռան վրայով է անցնում ներկայիս ճանապարհը:

«Հյուսիս-հարավ» ծրագրի ավարտը նախանշված է 2019-ին, սակայն ծրագիրն արդեն լայնացնում է իր աշխարհագրությունը՝ դուրս գալով Հայաստանի Հանրապետության սահմաններից եւ ծրագրի հիմնական նպատակը՝ դառնալ տարածաշրջանային ռազմավարական եւ տնտեսական շահավետ տարանցիկ գոտի՝ արդեն իսկ ուրվագծվում է. հարավից իրանական կողմն է պատրաստ ներդրումներ անել, հյուսիսից՝ վրացական կառավարությունն է արդեն իսկ գործնական քայլեր կատարել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Սերժ Սարգսյանը շնորհավորել է Իրանի նախագահ Հասան Ռոհանիին

11.02.2015



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ փետրվարի 11-ին, շնորհավորական ուղերձ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ Իսլամական հեղափոխության 36-րդ տարեդարձի կապակցությամբ: Այս մասին [NEWS.am](http://NEWS.am)-ը տեղեկանում է նախագահի մամուլի գրասենյակից:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Կաթոլիկ պատրիարք. Հայոց ցեղասպանության ժխտումը պետք է

23.01.2015




Երուսաղեմի տարբեր եկեղեցիների եպիսկոպոսների եւ քահանաների պատվիրակությունը այս շաբաթ այցելել է Հայ առաքելական եկեղեցու Երուսաղեմի պատրիարքություն, որպեսզի իր բարենմադ թանքները հայտնի պատրիարք Նուրիան Մանուկյանին անցած Սուրբ Ծննդի եւ 2015 թվականի մեկնարկի համար, որտեղ կնշվի Հայոց ցեղասպանության հարյուրամյակը: Այս մասին հայտնում է Fides տեղեկատվական գործակալությունը: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու լատինական ծիսակարգի Երուսաղեմի պատրիարք Ֆուադ Տուալը կարճ ողջույնում ընդգծել է տարեկցի կարեւորությունը, որը հայերը պատրաստվում են նշել ամբողջ աշխարհում: «Թուրքիան Հայոց ցեղասպանությունը երեւակայության արդյունք է համարում: Որոշ երկրներ խիզախություն են համոզմունք են ունեցել ճանաչել եւ դատապարտել Ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, այդ զանգվածային ժխտումը շատ երկար է շարունակվում: Այն պետք է հաղթահարվի ճշմարտությամբ», - ասել է Ֆուադ Տուալը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ցեղասպանության մասին պատմող «Մե գիրքը» թարգմանվել է հայերեն

23.01.2015



Երեւանի Գրողների միությունը վերջին տարիներին փութաջան աշխատել է հայերեն է թարգմանվել «Մե գիրքը», որում հայտնի արտասահմանցիները պատմում են Հայոց ցեղասպանության եւ հայկական հարցի մասին: Հունվարի 23-ին վերջին տարիներին Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկցին նվիրված թարգմանական գրականության ձեռքբերումների եւ առաջիկա ծրագրերի թեմայով համատեղ մամուլի ասուլիսում հայտարարել է Երեւանի Գրողների միության նախագահ Արգար Ափինյանը: Հայերեն թարգմանված գրքերից Արգար Ափինյանը առանձնացրել է նաեւ «Անտարեսի» հրատարակած «Ստամբուլի ընկեցիկը» գիրքը: «Մեծաթիվ են գերմաներենից թարգմանված գրքերը: Օրինակ, «Թիթեղյա թմբուկը», որի հեղինակ Գյունտեր Գրասը Նորբեյան մրցանակի դափնեկիր է», - ասել է Ափինյանը: Նա նաեւ առանձնացրել է գերմանացի գրող Բերնհարդ Շիինկի «Ընթերցողը» գիրքը, որը տպագրել է «Չանգակը» եւ որի թարգմանիչն է Գայանե Գինոյանը: Մամուլի ասուլիսի մասնակից, Հայաստանում Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռայներ Մորելն ընդգծել է, որ «Ընթերցողը» գիրքը Գերմանիայի հանրությանը հնարավորություն բնձնեց համակերպվելու իր անցյալի հետ: Ըստ դեսպանի՝ գիրքը երկար ժամանակ մեծ պահանջարկ է վայելել Գերմանիայում: «Այն մեծ ազդեցություն է թողել մեր հանրության վրա եւ բունքն քննարկման արժանացել: Գիրքը նվիրված է Գերմանիայի անցյալին: Սա, առաջին հերթին, պատմություն է երկու մարդկանց միջեւ: Գրքի երկրորդ մասում խոսքն այն մասին է, թե ինչպես են մարդիկ վերաբերվում իրենց անցյալին: Սա մեզ հնարավորություն է տալիս համակերպվելու մեր անցյալի հետ: Դուք գիտեք, որ ներկայումս մենք լավ հարաբերություններ ունենք ֆրանսիացիների եւ հրեաների հետ», - հավելել է դիվանագետը: Մամուլի ասուլիսի երրորդ բանախոսը՝ «Չանգակ» հրատարակչության գործադիր տնօրեն Էմին Մկրտչյանը, նշել է, որ իրենք թարգմանում են հիմնականում եվրոպական լեզուներից: [NEWS.am](http://NEWS.am)-ի հետ գրույցում անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերի թարգմանությունը՝ նա առանձնացրել է իտալերենից թարգմանված «Արտույտների ագարակը» գիրքը, որի շարունակությունն է «Ճանապարհի դեպի Զմյուռնիա» գիրքը: Էմին Մկրտչյանը հավելել է, որ այժմ պատրաստվում է «Մշո գրքի» թարգմանությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հալեպահայ Սոսե Պարոնյանի նվիրաբերած ձեռագրերը հանձնեցին Մատենադարանին

23.01.2015

Երեւանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի փոքր սրահում, այսօր՝ հունվարի 23-ին, տեղի է ունեցել հալեպահայ Սոսե Պարոնյանի՝ ՀՀ սփյուռքի նախարարությանը նվիրաբերած ձեռագրերի եւ հնատիպ գրքերի՝ Հայաստանի գլխավոր ձեռագրապահոցին փոխանցելու հանդիսավոր արարողությունը: Սփյուռքի նախարարությունից հայտնում են, որ ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Հրայր Թամրազյանը:





Ողջունելով ներկաներին՝ սփյուռքի նախարարը մասնավորապես նշեց. «Խորհրդանշական է, որ այսօր պատվաբեր առաքելությամբ գտնվում ենք Մատենադարանում՝ հայկական ձեռագրերի հարուստ մշակույթի այս ինքնատիպ պահուցում»:

Ազգի նվիրյալ գավակ հայեպահայ Սոսե Պարոնյանի մեծ հայրն ու մայրը՝ Մովսես և Զարթիկ Այալյան-Պարոնյանները, ովքեր Հայոց ցեղասպանության արյունալի օրերին, մահն աչքերի առաջ ունենալով, թուրքի անասարսուռ ճիրաններից առաջին հերթին փրկել և Խարբերդից Հալեպ են տեղափոխել մեծ արժեք ներկայացնող այս գրքերը՝ աղոթագրքեր, բառարաններ, ավետարաններ և 18-րդ դարի մեկ ձեռագիր, որոնց ճակատագիրը ոչնչով չի տարբերվում եղեռնագարկ հայ մարդու ճակատագրից: Սոսեի ծնողները՝ Անդրանիկ և Մարգրիտ Ղանդիլյան-Պարոնյանները, ամենայն հոգածությամբ պահել ու պահպանել են դրանք՝ իրենց նվիրական առաքելության իրավահաջորդը դարձնելով Սոսեին: Սոսե Պարոնյանը Սիրիայի համար այս տագնապալի օրերին որոշում է կայացրել՝ Պարոնյանների ընտանեկան ժառանգությունից 1 ձեռագիր և 14 հնատիպ գիրք «Սիրիահայության շտապ օգնության մարմնի» և Հալեպում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության աջակցությամբ նվիրել է Հայրենի պետությանը՝ ի դեմս ՀՀ սփյուռքի նախարարության: Այդ անգնահատելի նվերը պատասխանատվության մեծ զգացումով հանձնում ենք մաշտոցյան Մատենադարանին՝ ի պահ»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## ԱԳՆ. Ադրբեջանի ղեկավարությունը թաքցնում է իր տասնյակ գոհերի մասին տեղեկությունը

23.01.2015



Ադրբեջանի ղեկավարությունը թաքցնում է իր սադրանքների արդյունքում ունեցած տասնյակ գոհերի մասին տեղեկատվությունը: Այդ մասին NEWS.am-ի հարցին ի պատասխան նշել է Հայաստանի ԱԳ Նախարարի տեղակալ Ծավարշ Քոչարյանը:

Հարցին, թե Ամանորից սկսած Ադրբեջանի արկածախնդիր գործողությունների հետեանքով շարունակում է սրվել իրավիճակը Հայաստանի հետ սահմանին և Արցախի հետ շփման գծում, ինչը գոհերի պատճառ է դարձել, ի՞նչ շարժառիթներով է դա արվում, Ծավարշ Քոչարյանը պատասխանել է. «Խորապես ցավակցում ենք գոհված զինվորների հարազատներին և մերձավորներին: Հայկական կողմերի յուրաքանչյուր կորուստ խորը ցավ է մեզ համար»:

Իսկ Ադրբեջանի ղեկավարությունը թաքցնում է իր սադրանքների արդյունքում ունեցած տասնյակ գոհերի մասին տեղեկատվությունը»:

«Բաքվի ռեժիմը ամեն գնով իր իշխանությունը երկարաձգելու և Ադրբեջանի ժողովրդի հաշվին կուտակվող սեփական հարստությունը բազմապատկելու համար՝ վճարում է իր երիտասարդ զինվորների արյունով գնալով նորանոր արկածախնդիր սադրանքների»:

Նմանատիպ սադրանքներով Բաքուն միայն նպաստում է միջազգային հանրության կողմից՝ իրերն իրենց անունով կոչելու սկիզբ առած գործընթացին»,- նշել է Քոչարյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ադրբեջանցի դիպուկահարն ընկել է հայուհու դիպուկ գնդակից. ՊՆ խոսնակ

23.01.2015



Ադրբեջանցի դիպուկահարն ընկել է հայուհու դիպուկ գնդակից: Այս մասին հայտնել է ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:

«Ադրբեջանական կողմը շարունակում է իր լկտի քաղաքականությունը սեփական զինվորների ու նրանց հարազատների հանդեպ»:

Այսօր միայն ցերեկային ժամերին նրանք կորցրել են երեք զինծառայող Քարվանառի հատվածում, իսկ Արցախի հարավում մեկ դիպուկահար խմբի հրամանատար, որը ընկել է հայուհու դիպուկ գնդակից: Ադրբեջանի քաղաքացիները թող իմանան, որ իրենց զավակները ոչ միայն գոհվում են, այլ նաև անարգվում սեփական ղեկավարության կողմից»,- նշել է նա:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 23-ին առավոտյան ժամը 9:00-ի սահմաններում ադրբեջանական բանակի հատուկ նշանակության ստորաբաժանումները հարձակում են իրականացրել նաև Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի մարտական դիրքերից մի քանիսի ուղղությամբ:

Հայկական բանակի համապատասխան ստորաբաժանումների կողմից ժամանակին հայտնաբերվելով մարտ է սկսվել, որը տևել է շուրջ կես ժամ: Հակառակորդը կորուստներ կրելով և մարտական խնդիրը չկատարելով հետ է շարժվել, սակայն ցավոք հայկական

կողմը ունի երկու գոհ եւ վիրավորներ: Չոհվել են լեյտենանտ Կարեն Արարատի Գալստյանը եւ շարքային Արտակ Վաղարշակի Սարգսյանը»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## ԱԿԾ-ն ստացել է Կարեն Պետրոսյանի գործով փորձաքննության եզրակացությունը

23.01.2015



Հայաստանի ԱԿԾ-ն ստացել է Ադրբեջանում գերության մեջ մահացած Կարեն Պետրոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

ԱԿԾ մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնում են, որ փորձաքննության արդյունքները չեն կարող հրապարակվել, քանի դեռ նախաքննություն է ընթանում:

Նշենք, որ Կարեն Պետրոսյանի մահվան առթիվ հարուցվել է նաև քրեական գործ: Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանը գերեվարվել էր օգոստոսի 7-ին: Հաջորդ օրն արդեն՝ օգոստոսին 8-ին, ադրբեջանական կողմը տեղեկություն տարածեց իբր «սրտի անբավարարության հետեւանքով» գերու մահվան մասին: Հոկտեմբերի 10-ին Ադրբեջանի իշխանությունները Կարեն Պետրոսյանի դին հանձնեցին Հայաստանին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայաստանցի 108 գիտնական դրամաշնորհներ ստացան Հայ օգնության ֆոնդից

23.01.2015



30 խմբերում ընդգրկված հայաստանցի 108 գիտնական այսօր դրամաշնորհներ ստացան Հայ օգնության ֆոնդից կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, կենսատեխնոլոգիայի, աստղագիտության, հայագիտության եւ այլ ոլորտներում գիտական հետազոտություններ իրականացնելու համար:

Դրամաշնորհները տրամադրում է 2000 թվականից ՀՕՖ-ի հովանու ներքո գործող Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ-ANSEF):

Մրցույթին, որ իրականացվում է 2001 թվականից, այս տարի ներկայացված 174 գիտական հայտերից ԳԿՀԱՀ հետազոտական խորհուրդը հաղթող է ճանաչել 30-ը: Գիտական խմբերի ղեկավարներից 19-ը մինչև 35 տարեկան երիտասարդներ են, 15-ը՝ կանայք: Հաղթողներին ընտրում է ԱՄՆ-ում գործող փորձագիտական հանձնախումբը: Դրամաշնորհի գումարը կազմում է 5000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ի լրումն ԳԿՀԱՀ-ի տրամադրած դրամաշնորհների, ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի համագործակցության շնորհիվ 2014-ին 5, իսկ այս տարի՝ 2 լրացուցիչ դրամաշնորհ է հատկացվել երիտասարդ գիտնականների հետազոտական խմբերին:

Անցած 15 տարիների ընթացքում ԳԿՀԱՀ հետազոտական խորհրդին ներկայացվել են մոտ 1800 դիմում-առաջարկներ: Դրամաշնորհներ են ստացել 372 գիտական խմբեր, որոնցում ընդգրկված են եղել 1438 գիտնականներ: Ծրագրի դրամաշնորհային ընդհանուր գումարը կազմել է 1,86 մլն դոլար:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ներկայացվել է Էլեկտրոնային նոտար համակարգը

23.01.2015



Հայաստանի Հանրապետության նոտարական պալատում այսօր՝ հունվարի 23-ին, ներկայացվել է Էլեկտրոնային նոտար համակարգը, որը ֆինանսավորվել է Եվրամիության, իրականացվել՝ Եվրոպայի խորհրդի կողմից:

Շնորհանդեսին ներկա են եղել ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը, ՀՀ նոտարական պալատի նախագահ Համիկ Հարությունյանը, Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Նաիրա Ավետիսյանը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա-Բին Աջեմյանը, պաշտոնատար այլ անձինք, նոտարներ:

## Բոլորիս պահանջն է, որ Պերմյակովի գործն ընթանա թափանցիկ. ռուս պատգամավոր

23.01.2015

Բոլորիս գլխավոր պահանջն այսօր այն է, որ Ավետիսյանների սպանության մեջ մեղադրվող Վալերի Պերմյակովի գործն ընթանա թափանցիկ: Այս մասին այսօր՝ հունվարի 23-ին, Գյումրիում Ավետիսյանների շիրիմներին այցելության ժամանակ լրագրողներին ասաց ՌԴ

հասարակական, պետական գործիչ, պետղումայի պատգամավոր Իրինա Ռոդինան:

«Եթե մենք ինչ-որ բան թաքցնենք, դա ավելի շատ շշուկներ է անվստահություն կծնի: Այս սարսափելի պահին մեր գլխավոր խնդիրը երկու երկրների միջև վստահությունը պահպանելն է»,- ասաց Ռոդինան՝ կոչ անելով մամուլին ավելի զուսպ լինել՝ կատարվածը լուսաբանելիս:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրագենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դստերը: Վեց ամսական Մերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց, սակայն դեպքից 7 օր անց հիվանդանոցում մահացել է նաեւ նա:

Այս գործով նույն օրը, կեզգիշերին մոտ ձերբակալվել է ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել եւ մեղադրանք են առաջադրել ՌԴ-Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով): Հունվարի 21-ին Պերմյակովին մեղադրանք են առաջադրել նաեւ հայ քննիչները՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ երկու եւ ավելի անձանց դիտավորյալ սպանության համար: Ռուս զինծառայողն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Չի բացառվում Պերմյակովը հանձնվի հայկական կողմին. Բորիս Ռեզնիկ

23.01.2015

Չի բացառվում, որ Վալերի Պերմյակովի գործը հանձնվի հայկական կողմին: Այս մասին այսօր՝ հունվարի 23-ին, Գյումրիում Ավետիսյանների շիրիմներին այցելության ժամանակ լրագրողներին ասաց «Եդինայա Ռոսսիա»-ից պատգամավոր, անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման կոմիտեի անդամ Բորիս Ռեզնիկը:

«Դրանք բոլորն իրավական հարցերն են, որոնք պետք է որոշեն երկու երկրների իրավաբանները: Նրանք այժմ սերտորեն համագործակցում են: Ես համոզված եմ, որ խորապես կուսումնասիրվեն բոլոր օրենքները եւ կկայացվի միակ օրինական վճիռը: Հնարավոր է՝ Պերմյակովին հանձնեն հայկական կողմին, հնարավոր է՝ ոչ: Ամեն ինչ կարվի օրենքի շրջանակում»,- ասաց Ռեզնիկը:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրագենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դստերը: Վեց ամսական Մերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց, սակայն դեպքից 7 օր անց հիվանդանոցում մահացել է նաեւ նա:

Այս գործով նույն օրը, կեզգիշերին մոտ ձերբակալվել է ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել եւ մեղադրանք են առաջադրել ՌԴ-Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով): Հունվարի 21-ին

Պերմյակովին մեղադրանք են առաջադրել նաեւ հայ քննիչները՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ երկու եւ ավելի անձանց դիտավորյալ սպանության համար: Ռուս զինծառայողն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## ՀՅԴ Սպիտակի կառույցի 24 անդամներ լքել են կուսակցությունը

24.01.2015



ՀՅԴ Լոռու մարզի Սպիտակի կոմիտեի եւ կոմիտեության անդամները հայտարարություն են տարածել եւ խորը ավստանքով փաստել են, որ Հայ հեղափոխական դաշնակցությունն ամբողջությամբ շեղվել է իր առաքելությունից եւ վերածվել ապագային ու անգործունակ կառույցի:

«Կուսակցության ղեկավարությունը բացառապես զբաղված է իր անձնական շահերի սպասարկմամբ, ինչի նպատակով չի խորշում անգամ Արցախը եւ մեր ինքնիշխանությունը օտարին հանձնող դավաճանական ռեժիմի հետ գործակցելուց:

Տարիների փորձից ելնելով այլեւս համոզվեցինք, որ Հայ հեղափոխական դաշնակցության այլասերման գործընթացն անդառնալի է, ուստի հայտարարում ենք այդ կուսակցությանը մեր անդամությունը դադարեցնելու մասին եւ միանում ենք ազգային-ազատագրական շարժման դրոշ պարզած Հիմնադիր խորհրդարանին: ՀՅԴ անդամ մեր մյուս ընկերներին եւս կոչ ենք անում հետեւել մեր օրինակին»,- ասվում է թվով 24 անձանց հայտարարության մեջ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## ԱԳՆ-ն ակտիվ զարգացրել է շփումները Մերձավոր Արեւելքի հետ

26.01.2015



Անցած՝ 2014 թվականի ընթացքում քայլեր են ձեռնարկվել Մերձավոր Արեւելքի երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանման եւ զարգացման ուղղությամբ:

Հոկտեմբերի 29-30-ը Հորդանանի թագավոր Աբդալլահ Երկրորդի հրավերով տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Հորդանանի Հաշիմյան Թագավորություն:

Հանրապետության նախագահը հանդիպումներ է ունեցել Հորդանանի թագավոր Աբդալլահ Երկրորդի, նաև՝ ՀՀ Խորհրդարանի նախագահի, Սենատի նախագահի, վարչապետի և հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի ընթացքում ստորագրվել է երկկողմ համագործակցությունը խթանող տասնմեկ իրավական փաստաթուղթ:

Նոյեմբերի 30-ին Դակարում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովի ընթացքում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Եգիպտոսի վարչապետ Իբրահիմ Մահլաբի հետ: Հունիսի 2-ին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության և Չարգացման հայկական գործակալության հետ համատեղ կազմակերպել է հայ-եգիպտական բիզնես ֆորում: Կողմերի միջև ստորագրվել է հուշագիր համագործակցության մասին:

Միլիտերի նախարարության հետ համատեղ հետևողական աշխատանքներ են իրականացվել սիրիահայության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Ծայրահեղականների կողմից մարտի 21-ին Սիրիայի հայաբնակ Քեսաբ գյուղաքաղաքի վրա հարձակումից հետո մարտի 25-ին Սիրիա է մեկնել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական պատվիրակությունը: ՀՀ պատվիրակությունը Դամասկոսում հանդիպում է ունեցել ՍԱՀ նախագահ Բաշար ալ-Ասադի հետ:

Աշխատանքներ են ձեռնարկվել Քեսաբում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով տուժած սիրիահայությանը օժանդակություն ցուցաբերելու, Քեսաբի շուրջ ստեղծված իրավիճակը միջազգային ատյաններում պատշաճ ներկայացնելու և համապատասխան արձագանք պահանջելու ուղղությամբ:

Միջազգային ատյաններում Հայաստանը հետևողականորեն բարձրացրել է Իրաքի հյուսիսում, ընդհանրապես Մերձավոր Արևելքում ծայրահեղականների բռնությունների հետեւանքով ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների ոտնահարմանը վերջ դնելու նպատակով միավորվելու կարենությունը:

Բնականոն կերպով շարունակվել է քաղաքական երկխոսությունը Լիբանանի հետ:

Շարունակվել է Իրաքի հետ համագործակցության վերջին տարիներին ձեւավորված դրական դինամիկան: Փետրվարի 16-17-ը Իրաքի ԱԳ նախարար Հոշիար Չիբարիի հրավերով տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Իրաք, որի շրջանակներում հանդիպումներ են կայացել Իրաքի Հանրապետության փոխնախագահի, վարչապետի և արտգործնախարարի հետ:

Հայաստանը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջոցով Հյուսիսային Իրաքի Մինջարի տեղահանված բնակչությանը մարդասիրական օժանդակություն է տրամադրել:

Հունվարի 29-ին կայացել է ՀՀ ԱԺ նախագահի աշխատանքային այցը ԱՄԷ: Հունվարի 13-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի այցը ԱՄԷ քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

Հունիսի 3-ին Հայաստան է այցելել ԱՄԷ Աբու Դաբիի Էմիրության առևտրաարդյունաբերական պալատի պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի և փոխվարչապետ հետ:

Մեյսունբերի 17-20-ը կայացել է Քուվեյթի խորհրդարանի հայ-քուվեյթյան բարեկամական խմբի այցը Հայաստան: Պատգամավորները հանդիպումներ են ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխարտգործնախարարի հետ: Հունիսի 18-20-ը Հայաստանի և Իսրայելի ԱԳ նախարարությունների միջև խորհրդատվություններ անցկացնելու նպատակով Երեւան է այցելել ԱԳՆ գլխավոր տնօրեն Աննա Ազարիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում պատվիրակությունն այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Հուլիսի 8-10-ը Իսրայելում անց են կացվել Հայաստանի մշակույթի օրերը: Հունիսին և նոյեմբերին Իսրայել են այցելել ՀՀ մշակույթի և ֆինանսների նախարարները:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Մենք ձեր կողքին ենք. Եգիպտոսի շնորհավորանքը բանակի տոնի առթիվ

26.01.2015



Մեր հասարակության և պետության անվտանգ զարգացման երաշխավորն ու ապավենը մեր զինվորն է, մեր զինված ուժերն են: Այս մասին նշված է «Միդիա-Շանգայ» Եգիպտոսի ազգային միավորման շնորհավորական հայտարարությունում՝ Հայոց բանակի տոնի առթիվ, որը նշվում է հունվարի 28-ին:

Հայտարարությունում ասվում է.

«Այսօր մենք մեկ անգամ եւս հիշում ենք մեր զինված ուժերին, հարգանքի տուրք տալիս նրանց հիշատակին ովքեր գոհվեցին հանուն մեր ընդհանուր սան:

Ամանորի իր ուղերձում մեր երկրի նախագահ Սերժ Սարգսյանը ասեց որ «Անցնող տարում մենք շարունակեցինք մեր ընթացքը, շարունակեցինք կառուցել, շարունակեցինք նորոգել և զարգանալ որպես հասարակություն և որպես պետություն»:

Իսկ մեր հասարակության և պետության անվտանգ զարգացման երաշխավորն ու ապավենը մեր զինվորն է, մեր զինված ուժերն են: Հայոց բանակի զինվոր եղիր այն ամուր վահանը, որ երբեք ոչ ոք չկարողանա խոցել քեզ, իսկ մենք հավատում և վստահում ենք մեր «Վահանի» ամրությանը: Չէի ցանկանա երբեք որեւէ մեկին ասել հայրենասեր եղիր, չէ որ մենք պարզապես այդպիսին պետք է լինենք: Հայրենիքին, ժողովրդին ծառայելու գործում պարտավոր ենք չափազանց ձեւով հավասարակշռված ու չափավորված լինենք, ինչն էլ նաև մարդասեր, Աստվածավախ ու Աստվածապաշտ:

Սկսվել է 2015 թ. Միավրած չեւ լինի, որ ասեմ բավականին բուռն զարգացումներով: Դրան զուգահեռ զարգանում են նաև 2014թ. տարբեր իրադարձությունները և երեւույթները: Տարին սկսել ենք սահմանից տխուր լուրեր ստանալով: Բայց մի բան հստակ է, եւ հավատում ու վստահում եմ մեր բանակին մեր անվտանգ և խաղաղ կյանքի երաշխավորին: Խնդրում եւ կոչ եմ անում այս օրերի երբ հակառակորդը միջազգային գերտերությունների աչքի առջև խախտում է մարդկային հարաբերությունների բոլոր նորմերը, հաշվի առնելով աշխրհաքաղաքական այսօրվա իրավիճակը, երբ միշտ չէ, որ պատմության հասարակական-քաղաքական նույնիսկ աշխարհաքաղաքական զարգացումները ընթանում են իրենց բնական հունով, բնության օրենքներով, այլ մարդկային հավաքական կամքի ուժի, նույնիսկ սովորական տրամաբանությանը հակառակ:

Պատմության մեջ լինում է այն ինչ լինում է, եւ ոչ թե այն ինչ պետք է լինի բնության և հասարակական օրենքներով, բնական ընթացքով, սատար կանգնենք մեր բանակին:

Բանակաշինությանը զբաղվող մեր հայրենակիցներ, մեր սիրելի քաջ զինվոր, մենք ձեր կողքին ենք ու ամենինչով ապավինելու ենք Ձեզ: Մենք պետք է ինքներս մեզ օգնենք,

բանակաշինության սուրբ գործում, միասնական ու միակամ լինենք, որ աշխարհի հզորները ու վտանգավոր հարեւանները «հաշվի» նստեն մեր հետ: Մենք այն սերունդն ենք, որին վիճակված է աշխարհին ապացուցելու, որ հարկավոր է ճանաչել, դատապարտել և հատուցել Հայոց ցեղասպանությունը, որ աշխարհում պետք է նման ողբերգություններ չլինեն: Հայաստանը դժբախտ երկիր չէ և մենք միասնաբար թույլ չենք տա ինչ որ մարդկանց և երկրների, որ մեր ընդհանուր տունը՝ Հայաստանը դժբախտ երկրի վերածեն: Մեր անվտանգության ապահովման արդյունավետ ճանապարհը մեր բանակին հավատալ, վստահել, սատարել ու թիկունք կանգնելն է, մանավանդ արընթաց փոփոխվող այսօրվա մոլորակում: Միքենք մեր բանակը մեր յուրաքանչյուրիս գերագույն արժեքը: Մենք հպարտ ու հզոր ենք մեր բանակով, նրա որակական առաջընթացով, թող այս տարի մեր բանակի համար լինի «Մարտական կարողությունների զարգացման տարի»: Ինչպես իր խոսքում ասել է մեր հարգարժան նախարար Ս.Օհանյանը:

Ծնորհավորում ենք մեր բանակին, ուժ և կորով մեր զինված ուժերին, օպերատիվ արձագանքելու տարածաշրջանում տեղի ունեցող ցանկացած փոփոխությունների: Հանգիստ կյանքը մեր տարածաշրջանում կարելի է ասել հիմա չկա, բայց մեր բանակը ամենինչ անում է, որ ստեղծվի կայունություն, որին ձգտում ենք մենք բոլորս ու տա Աստված մեր բանակը ամենուր հաղթի: Փառք ու պատիվ մեր զինվորին, բոլոր զին ծառայողներին: Աստված ապավեն:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Հայտնի են Գյումրիի սպանդի գործով տուժողի իրավահաջորդները

26.01.2015



Գյումրիում հունվարի 12-ին սպանված Ավետիսյանների հարազատները դեռ որևէ մեկին չեն դիմել տուժողի իրավահաջորդ ճանաչվելու հարցով: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց Հասմիկ Ավետիսյանի քույրը՝ Ջուլիետան:

Նա նշեց, որ իրենց հայտնել են, որ յուրաքանչյուր զոհվածի համար լինի մեկ իրավահաջորդ, նախնական որոշել են, որ որպես տուժողի իրավահաջորդ կլինեն Արմեն Ավետիսյանի երկու քույրերը, Հասմիկ Ավետիսյանի երեք քույրերը, ինչպես նաև տան հարսի՝ Արաքսյա Պողոսյանի հայրն ու մայրը: Ջուլիետան ասաց, որ տուժողի իրավահաջորդ ճանաչվելու հարցով իրենք որևէ տեղ չեն դիմել, ոչ էլ իրենց է որևէ մեկը դիմել: «Մենք շատ կուզեինք իրավաբան ունենայինք, մենք մեզ կորցնում ենք, չենք կարողանում սթափ ուղեղով խոսել, իրավաբան ենք ուզում, որ մեր հարցերը, մեր իրավունքները լրիվ վերականգնեն, մենք արդեն կզգանք, որ մենք լրիվ անտեսված մարդիկ ենք», ասաց Հասմիկ Ավետիսյանի քույրը՝ հավելելով, որ գնալով ցավը ավելի է ծանրանում, իրենք ոչինչ չեն կարողանում անել և պետք է մեկը, ով կկարողանա իրենց բացատրել, թե որը որից հետո է:

Բացի իրավաբանական օգնությունից՝ Ավետիսյանների հարազատները հոգեբանական օգնության կարիք ունեն: Նրանց դեպքից հետո այցելել է հոգեբան, բայց միայն իրեն են այցելել, Հասմիկ Ավետիսյանի մյուս երկու քույրերը տանը չեն եղել, այժմ նորից հոգեբանի հետ հանդիպման կարիք կա: «Մենք ամեն ինչի կարիք ունենք, այսօրվա դրությամբ մենք մեր ցավով ենք սզացել, մարդիկ մտածել են, թե մենք չենք գիտակցել, բայց հասկացել ենք, որ մեզ ծաղրում են, և զոհերի մասով տեղում դոփում են, ոչ մի բան չկա, և մեզ ծաղրում ենք: Մենք ոչ մի տեղ չգիտենք, չենք էլ դիմել, չենք էլ կարող, մեր ցավը խորն է», ասաց Ջուլիետան: Նա նշեց, որ դեպքից հետո իրենք շատ-շատ են վախենում, անվտանգության ապահովման անհրաժեշտություն ունեն, այս հարցով ևս նրանք չգիտեն ում դիմել:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրազենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դստերը: Վեց ամսական Մերյոմա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել և տեղափոխվել է հիվանդանոց, սակայն դեպքից 7 օր անց հիվանդանոցում մահացել է նաև նա:

Այս գործով նույն օրը, կեսգիշերին մոտ ձերբակալվել է ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել և մեղադրանք են առաջադրել ՌԴ Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) և 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով): Հունվարի 21-ին Պերմյակովին մեղադրանք են առաջադրել նաև հայ քննիչները՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով երկու և ավելի անձանց դիտավորյալ սպանության համար: Ռուս զինծառայողն ընդունել է առաջադրված մեղադրանքը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Մերժ Սարգսյան. Մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունք

26.01.2015



Մենք պատերազմ հրահրելու որևէ պատճառ չունենք: Այդ մասին հայտարարել է նախագահ Մերժ Սարգսյանը ՊԵ վարչական համալիրում մասնակցել է պաշտպանության նախարարին կից կոլեգիայի և հայկական բանակի կազմավորման 23-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում:

«Մենք պատերազմ հրահրելու որևէ պատճառ չունենք: Մենք ինքներս միջադեպեր չենք հրահրում: Դուք դրա մասին շատ լավ գիտեք: Եվ մենք երբեք նախահարձակ չենք լինում: Դա մեզ պետք չի բնավ:

Սակայն մեր հանդեպ ձեռնարկված ցանկացած միջադեպի հետևել և հետևելու է հատուցման գործողություն: Մինչև վերջերս մեր ձեռնարկված պատասխան գործողությունները եղել են սիմետրիկ իրենց ձեռով և սիմետրիկ՝ ավելի մեծ կորուստներ հասցնելու առումով:

Այսուհետ կարող են տեղի ունենալ նաև ձեռով ասիմետրիկ հատուցման գործողություններ: Տաք գլուխները բազմաթիվ անակնկալների պիտի սպասեն: Ավելին, մեր սահմաններին եւ շփման գծի երկայնքով ավելի մեծ եւ սպառնալից կուտակումների պարագայում, մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունքը»,- նշել է նախագահը:

Ըստ Սարգսյանի, թո՛ղ ոչ ոք չմտածի, որ մենք ձեռքներս ծալած սպասելու ենք, թե երբ է արհավիրքը մտնելու մեր տուն: «Մեզ համար արհավիրք պատրաստողի հանդեպ մենք պարտավոր ենք լինել անողորմ: Կրկնում եմ դիմացինի արկածախնդրու-թյունը կստիպի մեզ զնալ անդառնալի վնասների հասցման ճանապարհով: Մենք հասկանում ենք, որ Ադրբեջանի իշխանությունները պատրաստ են անխնա կերպով մահվան բերան ուղարկել իրենց հարյուրավոր եւ հազարավոր քաղաքացիների՝ միայն թե իրենց այթոռները լինեն պաշտպանված: Բայց մենք չենք կարող հանդուրժել, որ դա կատարվի մեր քաղաքացիների կյանքերի ու մեր զինվորների կյանքերի գնով: Դա չի կարող արվել մեր հաշվին: Մենք մնում ենք այն համոզման, որ ճիշտը պայմանավորվելն է, որ ճիշտը բանակցությունները շարունակելն է, եւ հայտնի սկզբունքների ներքո պայմանավորվածություններ ձեռք բերելն է, իսկ դա հնարավոր է միայն զինադադարի պահպանման եւ վստահության կամուրջներ կառուցելու պարագայում: Կամուրջներ այրելով ոչ ոք լավ բանի չի հասել եւ չի հասնելու:

Ես մեկ անգամ եւս ի լուր բոլորի հայտարարում եմ. մենք պատրաստ ենք եւ՛ լավին, եւ՛ վատին: Իմ սեղանին առկա են հնարավոր բոլոր տարբերակները: Մթափ գործընկերոջ հետ կարող ենք եւ պարտավոր ենք խաղաղություն բանակցել: Ոչ սթափ հակառակորդին պարտավոր ենք եւ, անպայման, խաղաղություն ենք պարտադրելու»,- ասել է նախագահը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

է, որ Իրանը եւս շահագրգիռ է առանց սահմանափակումների բոլոր ոլորտներում զարգացնել բարեկամ եւ վստահելի գործընկեր Հայաստանի հետ հարաբերությունները:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվել են տնտեսական համագործակցության հարցերը, եւ հատկապես նախանշված խոշոր ծրագրերի իրականացման գործում հետեւողական աշխատանքը, որը, կողմերի համոզմամբ, զգալիորեն կնպաստի երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալների աճին եւ իր ազդեցությունը կունենա այլ ոլորտներում հարաբերությունների առավել սերտացմանը:

ՀՀ նախագահը եւ Իրանի արտգործնախարարն անդրադարձել են նաեւ տարածաշրջանի եւ միջազգային արդի խնդիրներին ու մարտահրավերներին, որոնց դիմակայման եւ տեւական կայունության ու խաղաղության հասնելու համար, նրանց կարծիքով, չափազանց կարեւոր է միմյանց աջակցելը:

## ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանի ելույթը

13:46, 13.02.2015



## Զարիֆ. Հայ-իրանական հարաբերությունները կարող են աշխարհի համար լավ օրինակ լինել

27.01.2015



Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ընդունել է Իրանի Բայամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Մոհամադ Չարիֆին:

Ողջունելով հյուրին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ Հանրապետության նախագահը կարեւորել է բարձրաստիճան փոխայցելությունները, որոնք, նրա համոզմամբ, հայ-իրանական հարաբերությունների օրակարգը եւ համագործակցության զարգացման հեռանկարները քննարկելու լավ հնարավորություն են:

Սերժ Սարգսյանը նշել է, թե ջերմությամբ է հիշում 2013 թվականին Իրանի Բայամական Հանրապետություն կատարած իր այցը եւ նախագահ Հասան Ռոհանիի հետ ունեցած հանդիպումն ու պայմանավորվածությունները, որոնց իրագործման, ինչպես նաև բարեկամ Իրանի հետ հարաբերությունները մշտապես նորոգելու եւ խորացնելու հարցում Հայաստանը պատրաստակամ է ու շահագրգիռ:

Արտգործնախարար Չարիֆն ընդգծել է, որ հայ-իրանական հարաբերությունները կարող են աշխարհի համար լավ օրինակ լինել, թե ինչպես մահմեդական եւ քրիստոնեական երկրները կարող են կողք-կողքի խաղաղ համակեցություն ունենալ: Նա նշել

Այս իշխանությունը անհասպտ պետք է հեռացվի, եւ մենք պետք է փակենք մեր պատմության անփառունակ եւ ամոթալի այս էջը: Հայաստանը պետք է մաքրել գաղջ մթնոլորտից: Այս մասին այսօր՝ փետրվարի 13-ին, ԲՀԿ քաղխորհրդի նիստում հայտարարել է կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Նրա ելույթը ներկայացնում ենք ստորև...

Հարգելի՛ գործընկերներ Այստեղ են ԲՀԿ խմբակցության անդամները, քաղխորհրդի անդամները, տարածքային կառույցների պատասխանատուները:

Ուզում եմ տեղեկացնել ձեզ, որ ես այսօր հանդիպելու եմ Լևոն Տեր-Պետրոսյանի և Բաֆֆի Հովհաննիսյանի հետ: Մենք քննարկելու ենք միասնական քայլերի ամբողջական փաթեթը:

Երեկ ուշ երեկոյան ինձ մոտ են եղել բազմաթիվ գործիչներ, Համաժողովրդական շարժմանը միացած խորհրդարանական ու արտախորհրդարանական ուժերի ղեկավարներ,

ազատամարտիկներ, հասարակական կառույցների ներկայացուցիչներ, որոնք սպասում են մեր որոշումներին: Եվ ամենակարևորը՝ ժողովուրդն է սպասում մեր խոսքին ու մեր քայլերին:

Մինչև մեր բուն անելիքները ներկայացնելը, ես ուզում եմ անդրադառնալ երեկ եթերը լցրած հայտնի մարդու ելույթին: Հատուկ ուզում եմ ընդգծել, որ իմ խոսքը ոչ թե ուղղված է նրան, այլ՝ ժողովրդին:

Սիրելի՛ ժողովուրդ Բոլորս շատ լավ գիտենք, թե ինչ վիճակում է գտնվում մեր երկիրը, Հայաստանի քաղաքացին և ով է այդ ամենի թիվ մեկ պատասխանատուն:

Վերջին տարիներին արված իմ բոլոր քայլերն ուղղված են եղել քաղաքական հարթության մեջ խնդիրները քննարկելուն և լուծումներ գտնելուն: Ես միշտ հայտարարել եմ, որ դասական իմաստով քաղաքական գործիչ չեմ, բայց երբ, մեղմ ասած, վատ կառավարում է իրականացվում և Հայաստանը հետ շարտվում, ապա բոլորս էլ պարտավոր ենք ոտքի կանգնել ու ամեն մեկս իր չափով ելքեր առաջարկել ու գտնել: Ելքը ես տեսել եմ քաղաքական փոփոխությունների մեջ:

Ես քաղաքականությունում մտել բացառապես մեկ նպատակով՝ օգնել իմ երկրին ու իմ ժողովրդին դուրս գալ այս վիճակից:

Ես ամեն ինչ արել եմ քաղաքական դաշտի զգալի մասի, բոլոր հիմնական քաղաքական ուժերի և գործիչների համախմբման



Մեր խոսքը գործ է: Իմ կյանքի ամենամեծ գործն այժմ էս համարում եմ չարիքի իշխանությունից Հայաստանն ազատելը: Բոլորիս հաղթանակ եմ մտադրում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Շառլ Ազնավուրը՝ իր ծնողների և Հայոց ցեղասպանության մասին

16.02.2015



Այն պահից ի վեր, երբ ծագումով հայ ֆրանսիացի ամենահայտնի երգահան Շառլ Ազնավուրը հաստատվեց Մուրիեն փոքր քաղաքում (Պրովանս), այդ շրջանում հայտնվեց Հայաստանի մի մասնիկը: Բացի տաղանդավոր դերասան լինելուց, նա նաև մեծ հայրենասեր է, որը միշտ կանգնած է Հայաստանի կողքին:

Նա 90 տարեկան է, եւ չի էլ մտածում թոշակի անցնելու մասին. ընդհակառակը, նա յի է Հայոց ցեղասպանությանը վերաբերող զարգացումներով ու նախագծերով, որոնց մասին նա վերջին ժամանակներս մշտապես խոսում է տարբեր ռադիո եւ հեռուստահաղորդումների եթերներից: Ծուռով ֆրանսիական հեռուստաալիքներից մեկի եթերում կցուցադրվի «Ազնավուրի պատմությունը 2015» փաստագրական ֆիլմը: Այս ֆիլմին նվիրված ռադիոհաղորդումները կհեռարձակվեն Փարիզի, Լիոնի, Վիեննայի, Վալանսի եւ Մարսելի հայ-ֆրանսիական ռադիոկայաններով: Ֆիլմը կցուցադրվի Մարսելում ապրիլի 25-ին Festival du Livre Franco-Arménien փառատոնի ժամանակ: Այս մասին գրում է La Provence պարբերականը, որը գրուցել է աշխարհառօրյակ շանտիեի հետ:

### Ձեր ծնողները Ֆրանսիա են տեղափոխվել 1923թ.: Ինչպես՝ է դա եղել:

Ես ինքս չգիտեմ: Նրանք ժամանել են Հունաստանից: Նրանց առաջին ֆրանսիական քաղաքը Մարսելն էր: Այն հայերը, որոնք թիչ թե շատ տեղաշարժվելու հնարավորություն ունեին, տեղափոխվում էին Վալանս կամ Փարիզ:

### Նրանք Ձեզ պատմե՞լ են, թե ինչպես են փրկվել Ցեղասպանությունից:

Ոչ: Ես գիտեմ միայն, որ հայրս ռուսական անձնագիր ուներ, ինչը նրան հնարավորություն էր տվել խտրական նալ նստել: Երբ թուրք զինվորները նրա հետեւից նալ էին բարձրացել, հայրս ասել էր. «Դուք միջազգային տարածքում եք գտնվում: Դուք Թուրքիայում չեք»: Նրանց հանգիստ էին թողել, եւ նրանք շատ այլ ներգաղթյալների նման Եվրոպա էին ժամանել Մարսելի տարածքով:

### Նրանք պատմե՞լ են Ձեզ հենց Ցեղասպանության մասին:

Ոչ: Մայրս մշտապես ողբում էր իր ընտանիքի անդամների մահը, սակայն կարիք չկար մեզ պատմել այն, ինչը մենք ինքներս հասկանում էինք:

### Երբ նրանք ժամանեցին Ֆրանսիա, ցանկանո՞ւմ էին արդյոք մշտական բնակություն հաստատել այստեղ:

Ոչ: Նրանք ցանկանում էին մեկնել Ամերիկա, սակայն դրա համար տեղաշարժի իրավունք էր անհրաժեշտ, ինչը նրանք չունեին: Իսկ հետո նրանք Ֆրանսիայում բնակվելու իրավունք ստացան, հարմարվեցին երկրին եւ այլևս չէին մտածում հեռանալու մասին: Իմ ծնունդը չէր, որ 1924թ. պահեց նրանց այստեղ. նրանք սիրեցին այս երկիրը:

### Նրանք պահպանե՞լ էին հայկական ավանդույթները:

Սկզբում հայրս գումար էր վաստակում ներգաղթյալների համար երգելով: Նա երգում էր ռուսերեն, հայերեն, իդիշ: Նա հայկական

պարահանդեսներ էր կազմակերպում, ինչը հնարավորություն տվեց նրան ռեստորան բացել: Հավանաբար, նա այն ժամանակ լավ էր վաստակում: Սակայն մեր ծնողները մեզ չէին պարտադրում հայկական ավանդույթները, բայց եւ չէին արգելում հետեւել դրանց: **Դուք առաջին անգամ Հայաստան այցելեցիք 1963թ.: Ինչու՞ այդքան ուշ:**

Անկեղծ ասած՝ մենք երջանիկ էինք, որ կոմունիստական կարգերը հասել են Հայաստան, քանի որ կոմունիզմը պաշտպանեց Հայաստանը: Ծիշտ է, նրանք, ովքեր մշտական բնակություն Հաստատեցին Հայաստանում 1947թ. իրենց կյանքի վերջին օրերը «Գուլագներում» անցկացրեցին: Այսինքն՝ այս փայտը երկու կողմ ուներ, բայց, ինչպես ասում են Չինաստանում, «նրանք գոնե իրենց հասանելիք մեկ բաժակ բրինձն ունեին»: Ես Հայաստանն ավելի լավ ճանաչեցի այն ժամանակ, երբ երկիրը դժվարությունների առաջ կանգնեց: Այդ ժամանակ ես արթնացա: Ես ասացի ինքս ինձ. «Դու հնարավորություն ունես քո պատմական հայրենիքի համար ինչ-որ բան անել»: Ծանոթներս ինձ հարցնում էին. «Դու վերադառնում ես հայրենիք»: Ես պատասխանում էի, որ իմ հայրենիքը Ֆրանսիան է: Ծանոթներս դեռ երկար կատակում էին այդ կապակցությամբ:

Հայրս ֆրանսիայի քաղաքացիություն ստացավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նա Դիմադրության ակտիվ մասնակիցներից էր, ինչը նրան Ֆրանսիայի քաղաքացիություն ստանալու հնարավորություն տվեց: Ծնողներս քաղաքացիություն ստացան, սակայն դա հեշտ չէր: Քույրս չստացավ քաղաքացիություն, քանի որ ծնվել էր Հունաստանում: Նա այժմ Կանադայի քաղաքացի է: Հայրս բանակում խոհարար էր աշխատում: Այդ դասակում հիմնականում ծառայում էին հրեաներ, ռուսներ եւ հայեր, եւ նա նրանց համար ոչ թե ֆրանսիական կերակուրներ էր պատրաստում այլ այն, ինչ նրանց դուր էր գալիս: Նա նաև հաճախ երգում էր նրանց համար: Պատերազմից հետո հայրս գլխավորեց Jeunesse arménienne de France (Ֆրանսիայի հայ երիտասարդություն) կազմակերպությունը եւ հիմնականում օգնում էր որբերին:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Գ. ԱՌԱՔԵԼԷՅԱՆԻՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ ո ր ո շ ու մ ե մ.

Գրիգոր Առաքելյանին ազատել Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և յիագոր դեսպանի պաշտոնից: 2015-02-17

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 8-րդ կետով՝ ո ր ո շ ու մ ե մ.

Արտաշես Թումանյանին նշանակել Իրանի Իսլամական Հանրապետության Հայաստանի Հանրապետության արտակարգ և յիագոր դեսպան (նստավայրը՝ Թեհրան):

2015-02-17



## Կոչ հայ երիտասարդներին

Սիրելի հայ երիտասարդներ,

Ճակատագրի բերումով դուք այսօր ապրում եք աշխարհի տարբեր երկրներում, մշակութային և լեզվական տարբեր միջավայրերում: Ձեզանից շատերն, անշուշտ, խոսում են հայերեն, և դա հրաշալի է: Ցավոք սրտի, համգամանքների պարտադրմամբ Սփյուռում ապրող երիտասարդ սերնդի մի մասը կամ վատ է խոսում կամ ամենևին չգիտի հայերեն. և դա տխուր իրողություն է, որովհետև լեզուն մեր ինքնության ամենակարևոր կոմպան է, ազգային գոյության հիմքը:

Սփյուռքահայ նշանավոր բանաստեղծ և ուսուցիչ **Մուշեղ Իշխանը գրել է՝ «Հայոց լեզուն տունն է հայուն»:** Իսկապես, մայրենին մեր տունն է, մեր հայրենիքը, մեր ինքնության հիմքը...

2015 թվականը կարևոր հանգրվան է հայ ժողովրդի համար: Նշելով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը՝ մեզանից յուրաքանչյուրն ուզում է իր ներդրումն ունենալ Հայ դատի համար մղվող պայքարում: Այս պայքարում երիտասարդների հիմնական գործը պետք է լինի մայրենին իմանալը, հայերեն սովորելը՝ ի խոնհարումն 1.5 միլիոն նահատակների հիշատակի, հազարավոր անթաղ հայերի ոսկորների առջև:

Ուրեմն՝ սիրելի պատանիներ և պարմանուհիներ,

Կոչ ենք անում ձեզ, որ ցեղասպանության 100-րդ տարելիցը դառնա բեկումնային՝ ձեր մայրենի լեզուն սովորելու առումով, նոր ավյունով և նոր եռանդով տրվեք հայերեն սովորելուն, է՛լ ավելին՝ հայերենը ձեզ համար դարձրեք միմյանց հետ շփվելու, միմյանց հետ հաղորդակցվելու հիմնական լեզուն: Թող դա՛ լինի ձեր հիմնական, իրական ներդրումը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման, համայն հայության համախմբման և հզորացման սուրբ գործում:

Մեծ անգլիացի Բայրոնը բանաձևել է. «Աստծու հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»:

Ուրեմն՝ իմացե՛ք, խոսե՛ք և հաջորդ սերունդներին փոխանցե՛ք մեր աստվածային հայոց լեզուն:

**ՀՀ սփյուռքի նախարար  
Հրանուշ Հակոբյան**

## Հայաստանում 3300-ամյա վաղեմության բախտագուշակության սրբավայրեր են հայտնաբերել

21.02.2015



Հնագետները Հայաստանում շուրջ 3300-ամյա վաղեմության երեք սրբավայր են հայտնաբերել: Ըստ «International Business Times»-ի, փորձագետները կարծում են, որ Գեղարոտի բլրի գագաթին գտնվող ամրոցում

հայտնաբերված սրբավայրերը ժամանակին իշխողների կողմից օգտագործվել են՝ ապագան կանխատեսելու համար: Յուրաքանչյուր սրբավայրում առանձին սենյակ կա, որտեղ կավե ավազան է կառուցված՝ լի մոխրով եւ խեցե անոթներով:

Քորնելի համալսարանի պրոֆեսոր Ադամ Սմիթը եւ նույն համալսարանի շրջանավարտ Ջեֆրի Լեոնը, որոնք հայտնաբերել են սրբավայրը, կարծում են, որ այդ ժամանակների իշխողներն ու մոզերը, հնարավոր է, որոշ իրեր այրել եւ թրջել են սպիրտի մեջ՝ գուշակության ժամանակ գիտակցությունը մթազնելու համար:

Այդ ժամանակաշրջանի հասարակության եւ ղեկավարության անունն անհայտ է: Հետազոտողներն այդ վայրերում բախտագուշակության երեք տեսակի վկայություններ են հայտնաբերել, այդ թվում՝ կենդանիների այրված ոսկորներով գուշակության:

Ենթադրությունների համաձայն, սրբավայրերն օգտագործվել են շուրջ 100 տարի, մինչեւ ամրոցը ոչնչացվել է, հավանաբար՝ այն իշխող հասարակության հետ միասին: Գիտնականները կարծում են, որ դա տեղի է ունեցել ինչ-որ հսկանարտության հետեւանքով:

## Արևմտյան Հայաստան

**Թուրք ընդդիմադիր. Թուրքիայի իշխանությունները հայերին հողեր են տալու**  
23.01.2015



Թուրքիայում հայտնի ընդդիմադիր գործիչը պնդում է, որ երկրի կառավարությունը Յեղասպանության 100-րդ տարելիցի մոտենալու հետ պատրաստվում է հայերին որոշ հողեր առաջարկել:

Ըստ թուրքական «Today's Zaman» պարբերականի, «Ազգայնական շարժում» կուսակցության փոխնախագահ Օրթայ Վուրակը, մասնավորապես, հայտարարել է. «Ես գիտեմ, որ իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունն ընթացիկ ծրագիր ունի: Մի պրոֆեսոր խորհրդատվություն է տրամադրում եւ աշխատում է հայերին հողեր փոխանցելու հարցի շուրջ»:

Ասելով, որ հայկական սփյուռքը հավակնություններ ունի Անկարայում նախագահի նախկին նստավայրի եւ Ստամբուլի Եշիլքոյ շրջանի որոշ հողերի նկատմամբ, Վուրակը հարցադրում է արել, արդյո՞ք գուզադիպություն է, որ կառավարությունն ավելի վաղ հայտարարել է Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանը Եշիլքոյի շրջան փոխադրելու մասին:

Նախագահի նախկին նստավայրը, որը հայտնի է որպես Չանքայա, նախագահական պալատ էր մինչեւ Թուրքիայի նախագահի պաշտոնում Ռեֆեի Թայիփ Էրդողանի

ընտրվելը: Էրդոհանը հիմա ապրում է նոր կառուցված նստավայրում, իսկ Չանքայան փոխանցվելու է վարչապետին:

«Արդյո՞ք Աթաթուրքի անվան օդանավակայանն ու նախագահական պալատը կտան՝ հայկական սփյուռքի պահանջները բավարարելու համար: Արդյո՞ք զուգադիպություն է, որ նրանք այնտեղից հեռանում են հենց այդ ժամանակ», - ասել է Վուրալը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Եթե ուզում ենք հաշտվել, վերջ տվեք ժխտողականությանը. Radikal-ը՝ Դավութջյուլուն

24.01.2015



Թուրքական Radikal պարբերականի հայտնի պուրակագիր Ջենգիզ Չանդարն իր հերթական հրապարակման մեջ անդրադարձել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանի կողմից ապրիլի 24-ը Չանքայեի ճակատամարտի օր նշելու եւ վարչապետ Ահմեդ Դավութջյուլուի Դինքի սպանության հետ կապված հայերին ուղղված կոչին:

Թուրք պուրակագիրն իր խոսքը սկսել է. «Եթե Դավութջյուլուն ցանկանում է, որ Դինքի մահվան տարելիցին իր հրապարակած ուղերձը անկեղծ ընկալվի, ապա Չանքայեն նշենք ինչպես ամեն տարի՝ մարտի 18-ին եւ չփորձենք ստվերել ապրիլի 24-ը»:

Ջենգիզ Չանդարն այնուհետ մեջբերում է հայերին ուղղված Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութջյուլուի հայտնի ուղերձից տողեր եւ շեշտում, որ իր հայտարարությունով Դավութջյուլուն կրկին շարունակում է ժխտողականությունը, քանի որ իր տեքստում նշում է 1915-ի ցավերի մասին, սակայն միեւնույն ժամանակ հայտարարվում է, որ ապրիլի 24-ին Չանքայեի ճակատամարտի 100-ամյակ են նշելու:

«Դավութջյուլուն Դինքի սպանության տարելիցի հետ կապված հայերին ուղղված կոչում խոսում է «սկիզբ» դնելու մասին: Լավ է, սակայն իրկանում լավ կլինի, որ արդեն սկսենք առերեսումը պատմության հետ:

Եւ դրա համար առաջին պայմանը, ինչպես Դավութջյուլուն կոչում նշեց. «մեր ցանկությունը բարեկամությունն ու խաղաղությունն է», պետք է հրաժարվել ժխտողականությունից եւ արեւելյան խորամանկությունից», - ամփոփել է Radikal-ի պուրակագիրը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրք կուսակցատըր հանդիպել է Պոլս հայոց փոխպատրիարքի հետ

26.01.2015

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցության նախագահ Քեմալ Քըլլիչդարոլուն հանդիպել է Թուրքիայի ոչ մահմեդական կրոնական առաջնորդների հետ:



Թուրքական Haberturk-ի փոխանցմամբ՝ «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլլիչդարոլուն մամուլի համար փակ հանդիպում է անցկացրել Պոլս հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանի, Հունաց պատրիարք Բարդուղիմեոսի, ասորական կաթողիկ եկեղեցու փոխպատրիարք Յուսուֆ Սադի, ասորական ուղղափառ եկեղեցու մետրոպոլիտ յուսուֆ Չեթինը եւ Թուրքիայի հրեաների հոգևոր առաջնորդ Իսհաք Հալելայի հետ:

Հանդիպումից հետո Քեմալ Քըլլիչդարոլուն հայտարարել է, թե իրենց կուսակցության նպատակն է թույլ չտալ հասարակության բեւեռացման, մարդկանց կենցաղին միջամտելու, մարդկանց դավանած կրոնի համար նրանց հետապնդելու քաղաքականությանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ամոթ, երիտթուրք «ղասարների» կողմից հայերի կոտորածի օրը տոն ենք նշելու. Radikal

26.01.2015



Թուրք հայտնի մտավորական «Ներեցեք մեզ, հայեր» ակցիայի կազմակերպիչներից Բասքըն Օրանը թուրքական Radikal պարբերականի իր պուրակում անդրադարձել է նախագահ Էրդոհանի կողմից ապրիլի 24-ը Չանքայեի հաղթանակի օր նշելու հետ կապված խայտառակ հայտարարությանը:

Բասքըն Օրանն իր հրապարակման մեջ նշում է, որ այս տարի Թուրքիայի նախագահը թուրքական արտաքին քաղաքականության արգելակներից հանդիսացող Ադրբեջանի բռնապետ Իլհամ Ալիևի հետ է նշելու Չանքայեի ճակատամարտի օրը: «Եւ ամեն տարի մարտի 18-ին նշվող այդ իրադարձությունն այս տարի «նշվելու» է երիտթուրք «ղասարների» կողմից հայերի դաժան կոտորածների խորհրդանշական օր հանդիսացող ապրիլի 24-ին:

Հայտնի լրագրող Ռոբերտ Ֆիսկը The Independent-ում գրել էր, որ կոտորված 1,5 մլն հայերի ուրվականները կբայլեն նրանց կողքով:

Պետք է գետնից մտնենք: Լավ, անտեսում ենք այդ մարդկանց ցավերը, բայց եկեք չծաղրենք: Նախորդ տարի Էրդոհանը ցավակցում էր կոտորված հայերի թոռներին, իսկ

այսօր նրա այս խայտառակությունը մարդուն փշաքաղեցնում է: Հայաստանի նախագահին ապրիլի 24-ին հրավիրում է Չանաքալե: Ի՞նչ է սա: Ի՞նչ տիպի ամոթ: Որոշների համար հասկանալի լեզվով ասեմ, ի՞նչ մեղք է սա: Թատերական ներկայացմանը պատրաստ էինք, բայց այս ամոթը շատ եղավ»,-ամփոփել է Բասըրն Օրանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Der Tagesspiegel. Գերմանիան չի ցանկանում խոսել ցեղասպանության մասին

26.01.2015



Գերմանական «Der Tagesspiegel» օրաթերթը հունվարի 23-ին հրատարակել է Մաթիաս Մայսների հոդվածը՝ «Դաշնային կառավարությունը չի ցանկանում խոսել ցեղասպանության մասին» վերնագրով:

Հեղինակը հոդվածը սկսում է այն իրողության ներկայացմամբ, որ աշխարհի ավելի քան 20 երկիր հարյուր տարի առաջ տեղի ունեցած հայերի տեղահանումն ու ջարդերը հստակորեն որակել է իրբեւ ցեղասպանություն: Նա միեւնույն ժամանակ փաստում է, որ չորս երկրում՝ Հունաստանում, Շվեյցարիայում, Սլովակիայում եւ Իսպանիայում ցեղասպանության ժխտումը կարող է ընդհուպ քրեորեն հետապնդվել: Դաշնային կառավարությունը, սակայն, շարունակում է չցանկանալ կիրառել «ցեղասպանություն» եզրույթը. այս մասին պարզ եղա՞նում թերթին տրամադրված կառավարության պատասխանից՝ ուղղված ձախերի խորհրդարանական խմբակցության հարցմանը:

Հեղինակը հակիրճ ներկայացնում է ապրիլի 24-ի ելույթները, մանրամասնում օրվա նշանակությունը:

Հիշյալ դիմում-հարցումը կառավարությանն էր ներկայացրել ձախ պատգամավոր Ուլրա Յելփկեն եւ մի քանի այլ պատգամավորներ: Ու. Յելփկեն անընդունելի է համարում հարցի շուրջ կառավարության որդեգրած դիրքորոշումը:

Թերթին տված մեկնաբանությունում նա ասել է, թե Դաշնային կառավարությունն իր այս պնդմամբ խուսափում է համատեղ պատասխանատվություն ստանձնել այն ժամանակվա հանցագործության համար. «Քանզի Գերմանական կայսրությունը Օսմանյան կայսրության մոտ դաշնակիցն էր, ինչպես նաեւ մեղակիցը եւ ինչ-որ չափով նաեւ՝ հանցակիցը»:

Հեղինակն իր հոդվածում խոսում է նաեւ Բունդեսթագի՝ 2005 թվականին ընդունած բանաձեւի մասին, որտեղ եւս խուսափել են ուղղակիորեն կիրառել ցեղասպանություն բառը. տերմինը, այդուհանդերձ, մեկ անգամ հիշատակում են բանաձեւում՝ հղում անելով «բազմաթիվ անկախ պատմաբանների, խորհրդարանների եւ միջազգային կազմակերպությունների»:

Կառավարության պատասխանում ասված է նաեւ, որ «այս պահի դրությամբ» հարյուրամյակի կապակցությամբ

հիշատակի միջոցառում Դաշնային կառավարությունը չի ծրագրել:

Չախերին տված պատասխանում կառավարությունը խոստովանում է նաեւ, որ սահմանափակ ձեւով է հաջողվել դաշնային միջոցներով ֆինանսավորվող Լեւոն Մարտիրոսյանի հետազոտական կենտրոնի շնորհիվ հաշտեցում ապահովել գերմանացիների, հայերի եւ թուրքերի միջեւ: Իբրեւ պատճառ առաջ է քաշվում թուրքերի գնահատականը՝ կենտրոնի հայամետ դիրքորոշում ունենալու մասին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Մենք պարտավոր չենք ճանաչել Հայոց ցեղասպանությունը. Էրդոհան

31.01.2015



Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը կրկին հայտարարել է, թե, որ եթե հայերն անկեղծ են 1915-ի հարցում, թող խնդիրը թողնեն պատմաբաններին:

Թուրքական Haber7 կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը TRT հեռուստաընկերության եթերում խոսել է նաեւ Հայկական հարցից՝ պնդելով, թե Հայկական սփյուռքը հանգիստ չի մնում: Մեղադրելով Սփյուռքին՝ Էրդոհանը հիշեցրել է, թե Թուրքիան միշտ ասել է, թե պատրաստ է քննարկել թեման պատմաբանների հետ: «Մենք ասում ենք, որ եթե անկեղծ եք, բացենք մեր արխիվները, թողենք թող պատմաբաններն ուսումնասիրեն, գեկույցները մեզ ներկայացնեն: Իսկ մենք, որպես քաղաքագետներ, նստենք խոսենք: Եթե կա ինչ-որ բանի համար վճարելու անհրաժեշտություն, մենք կվճարենք դա, սակայն ոչ-ոք չի գալիս:

Խնդրի հետ կապ չունեցող երկրները ըստ իրենց հայեցողության որոշումներ են կայացնում: Եթե հարցնես, Հայաստանի տեղը քարտեզի վրա ցույց չի կարող տալ, բայց խորհրդարանում Հայաստանի հետ կապված որոշումներ են ընդունում: Մենք պարտավոր չենք ինչ-որ մեկի պատվերով ճանաչել Հայոց ցեղասպանությունը»,-ասել է Էրդոհանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Ամաչում ենք հայերի հանդեպ մեր պապերի արածից. քուրդ քաղաքապետ

09.02.2015

Թուրքիայի հարավ-արեւելյան Մարդինի քաղաքապետ Ահմեդ Թուրքը հայտարարել է, թե ամաչում է հայերի եւ ասորիներին կատմամբ իրենց պապերի արածների համար:

Թուրքական Cumhuriyet պարբերականի փոխանցմամբ՝ Մարդինի քաղաքապետ Ահմեդ Թուրքը Գերմանիայում քուրդ բնակչության հետ հանդիպման ժամանակ խոսել է Թուրքիայում ներքաղաքական իրավիճակի, քրդական հարցի կարգավորման եւ Հայոց ցեղասպանության հարցի շուրջ:



«Ամաչում ենք հայերի եւ ասորիների հանդեպ մեր պապերի արածների համար: Երբ այս հին հողերից հեռացան, մենք այդ ժամանակ բախվեցինք աղքատության հետ: Նրանք մեր երկրի հարստությունն էին: Ինչ ցավալի է, որ երիտթուրքերի կողմից իրականացված կոտորածների մեջ նաեւ քրդերն են օգտագործվել», -ասել է Ահմեդ Թուրքը:

Նշենք, որ Ահմեդ Թուրքը տարբեր առիթներով Ցեղասպանության ժամանակ քրդերի մասնակցության համար ներողություն է խնդրել հայերից:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Դերսիմի կոտորածից առաջ թուրք զինվորները հայերի հետ խորոված էին ուտում. ակնառես

15:05, 09.02.2015



Թուրք գրող Մուրադ Քահրամանն իր «Երկինքը կորցրած արծիվը» գրքում ներկայացրել է 1937-38 թվականների Դերսիմի կոտորածների ակնառեսների վկայությունները՝ հատուկ տեղ առանձնացնելով Սարգիս Գրիգորյանի վկայություններին:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ թուրքական «Իլեթիշիմ» հրատարակչատան կողմից լույս տեսած «Երկինքը կորցրած արծիվը» գրքի գլխավոր ակնառես Սարգիս Գրիգորյանը մանրամասն պատմել է Դերսիմի Խոզաթի շրջանի Չըմեք գյուղում տեղի ունեցած կոտորածների մասին:

Դերսիմի կոտորածների ժամանակ 12-ամյա Սարգիսը պատմել է, որ իրենց գյուղի մոտ գտնվող Մախտակ լեռան վրա տեղավորված թուրք զինվորների հետ գյուղի բնակչության հարաբերություններն այնքան լավ է եղել, որ ոչ մեկի մտքով չէր անցնի, որ մի օր նրանք դաժանորեն կսկսեն կոտորել գյուղացիներին:


Սարգիսը հիշել է, որ կոտորածը սկսելուց մեկ օր առաջ գյուղի տղամարդիկ գնացել էին զինվորներին հյուր եւ գյուղից տարած մսով խորոված արել եւ զինվորների հետ միասին կերել:

Գրքում Սարգիսը շեշտել է, որ կոտորածի օրը զինվորները գնդակահարում էին բոլորին անխափ եւ ինքը մահացած ձեռացնելով է կարողացել փրկվել՝ նշելով, որ կոտորածից հետո իր կողքին տեսել է մոր եւ քրոջ անշունչ դիակները:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում նոր գիրք՝ Հայոց ցեղասպանության մասին

09.02.2015



Թուրքիայում հերթական գիրք է լույս տեսել Հայոց ցեղասպանության մասին: Գրքում ներկայացված են Դիարբեքիում տեղի ունեցած կոտորածներն ըստ ականատեսների:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Haberler-ը, գրքի հեղինակներ Ադնան Չելիքը, Նամըք Քեմալ Դինչը եւ Իսմաիլ Բեշիքչին «100-ամյա ախ. Հասարակության հիշողության հետքերով. 1915 Դիարբեքի» գրքում հավաքել են Ցեղասպանության ականատեսների վկայությունները: Գրքի հեղինակներից Ադնան Չելիքը նշել է, թե քրդերը եւս մասնակցել են ցեղասպանությանը, սակայն շեշտել սխալ է ասել, թե քրդերն են ցեղասպանությունը իրականացրել, քանի որ բազմաթիվ վկայություններ կան, որ քրդերը նաեւ փրկել են:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Աղթամարը, Անին, Արարատը եւ Նեմրույը՝ Թուրքիայի դրախտավայրերի ցանկում

00:04, 12.02.2015



Թուրքական կայքերը հրապարակել են Թուրքիայի արեւելյան հատվածի (Արեւմտյան Հայաստան-խմբ) 10 վայրերի ցանկը, որոնք պետք է անպայման տեսնել: Թուրքական Milliyet-ն այդ վայրերն անվանել է գաղտնի դրախտավայրեր:

1. Նեմրույ լեռան խառնարանային լիճը: Իր մեծությամբ համարվում է աշխարհում 2-րդ եւ Թուրքիայում 1-ին ամենամեծ խառնարանային լիճը: 650 մետր խորություն

# Հույս Ամսագիր

ունեցող խառնարանի մեջ 5 լճակներ են գտնվում, որոնցից ամենամեծը 13 կմ քառակուսի է, խորությունը՝ 155 մետր: Լիճը ծովի մակերևույթից բարձր է 2442 մետր:



2. Գիղեվիքի ջրվեժը, որը գտնվում է Երզնկայում:



3. Լողացող կղզիները, որոնք գտնվում են Բինգյոլի նահանգում:



4. Անի. Հայոց Բագրատունիների օրոք Հայաստանի մայրաքաղաք:



5. Իսհաք փառայի պալատը, որը գտնվում է Բայազետում:




6. Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին: Կառուցվել է 915-921 թվականներին Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու կողմից:



7. Խարբերդի բերդը, որը կառուցվել է Ուրարտուի (Արարատյան թագավորություն-խմբ) կողմից:



8. Էրզրումի «Չիֆթե մինարեն» (զույգ մինարեթ): Նախկինում քրիստոնեական հոգևոր կառույց, որի տեղում հետագայում մեդրեսե է կառուցվել:



9. Աիլաթի (Խլաթ) սելջուկյան գերեզմանները:



10. Արարատ լեռ:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիայում առաջին անգամ ասորական գյուղի հին անունն է վերադարձվել

12.02.2015



Թուրքիայի Մարդին նահանգի Միդյաթի շրջանի Ալագոզ գյուղին վերադարձվել է նախկին անվանումը:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայում առաջին անգամ ասորական գյուղի հին անունն է վերադարձվել: Մարդին նահանգի Ալագոզ գյուղի «Ակադ» միությունը դիմել էր Մարդինի քաղաքապետարան՝ առաջարկելով գյուղին վերադարձնել հին անունը:


Մարդինի քաղաքապետարանում ձայների մեծամասնությամբ որոշում է կայացվել գյուղին տալ հին անունը՝ Բեթքուլթան:

Հիշյալ գյուղի «Ակադ» միության նախագահ Ադեմ Չոքբուրը նշել է, թե միևնույն է ոչ-որ գյուղը թուրքական անունով չէր կոչում՝ շեշտելով, որ այս որոշումը կարելու էր, քանի որ նախադեպ է ստեղծվում մյուս ասորական բնակավայրերի անվանափոխության համար:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Բիթլիսում ցանկանում են Վիլյամ Սարդյանի տուն-թանգարան եւ գրադարան բացել

13:48, 12.02.2015



Հայտնի գրող Վիլյամ Սարդյանի հայրական քաղաքում Բիթլիսում ցանկանում են գրողի տուն-թանգարան ստեղծել եւ կառուցել նրա անունով գրադարան:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի «Ակոս»-ը բիթլիսցի լրագրող Ահմեդ Թուլգարը նշել է, թե Բիթլիսում Վիլյամ Սարդյանի անունով գրադարան կառուցելու գաղափարը կիսվել է Բիթլիսի քաղաքապետի հետ եւ դրական պատասխան ստացել:

Ահմեդ Թուլգարը, նշելով, որ Սարդյանի անունով գրադարանի բացումը կլինի այդ հողերում հայերի թողած ժառանգությանը եւ գրականությանը շնորհակալության արտահայտություն, տեղեկացրել է, թե նախնական մտածում են գրադարանը կառուցել Բիթլիսի շուկայի մոտակայքում, իսկ հետագայում նրա մի մասը տեղափոխել վերակառցման մեջ գտնվող Սարդյանի բնտանիքին պատկանած տուն:

«Բիթլիսում արդեն ունենք Սարդյանի անունով փողոց, իսկ նրա տուն-թանգարանի եւ գրադարանի բացումով մի տեսակ կառուցվել ենք Հայոց ցեղասպանության հետ», -ասել է Ահմեդ Թուլգարը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայկական սփյուռքը մեր սփյուռքն է, թշնամի չէ մեզ. Դավութջյուր

12.02.2015



Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութջյուրը փետրվարի 11-ի երեկոյան հանդիպել է Թուրքիայի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսը», Թուրքիայի վարչապետը հայտարարել է, Թուրքիան հրավիրում է 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած կոտորածների հետեւանքով արտասահման հեռացած իր քաղաքացիներին: «Նրանք մեր սփյուռքն են, օտար սփյուռք չեն», -ասել է Դավութջյուրը՝ շեշտելով, թե Հայկական սփյուռքն էլ իրենց սփյուռքն է եւ թշնամի չէ:

Դավութթյուն շեշտել է ազգային փոքրամասնությունների կողմից թուրքական մշակույթում արած մեծ ներդրումները՝ պնդելով, որ առաջին հայկական վեպը թուրքերենով է գրվել: Թուրքիայի վարչապետը հավաստիացրել է, թե Հայաստանի, Իսրայելի եւ Հունաստանի հետ հարաբերություններում առկա խնդիրները բացասաբար չեն ազդել Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների վրա: Դավութթյունի հետ հանդիպմանը մասնակցել են Ստամբուլի «Ակոս» եւ «Ժամանակ» պարբերականների գլխավոր խմբագիրները, Ստամբուլի հայկական «Սուրբ Փրկիչ» հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Ծիրինժյուն եւ ազգային փոքրամասնությունների այլ ներկայացուցիչներ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում 1014 գույք է վերադարձվել հայերին եւ մյուս քրիստոնյա համայնքերին


15:47, 12.02.2015

Թուրքիայի վարչապետի աշխատակազմից հայտնել են, թե 2008-ից այս կողմ ազգային փոքրամասնությունների հիմնադրամներին է վերադարձվել թվով 1014 գույք: Թուրքական Demokathaber կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայում 2008 թվականին հիմնադրամների վերաբերյալ օրենքի փոփոխություններից հետո Հիմնադրամների գլխավոր խորհուրդը Թուրքիայի ազգային փոքրամասնությունների հիմնադրամներին է հանձնել 1014 գույք, իսկ 150 գույքի նկատմամբ դիմումները գտնվում են քննարկման փուլում:

Նշվում է, որ այս պահին Թուրքիայում գործում են ազգային եւ կրոնական փոքրամասնություններին պատկանող 165 հիմնադրամ, որոնցից 76-ը հունական են, 53-ը՝ հայկական, 19-ը՝ հրեական, 10-ը՝ ասորական:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Կը Վերանորոգուի Մալաթիոյ Ս. Երրորդուծինը



Թուրքիոյ Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթէշեան 21 Յունուարին, Իսթանպուլարնակ մալաթիացիներու հայրենակցական միութեան Բ. ատենապետ Սարգիս Չիզմէնիի եւ անդամներէն Գէորգ Էօզգարակէօզի ու Սերտար Պոյաճրի ընկերակցութեամբ այցելած է Մալաթիա: Արամ սրբազան յատուկ այցելութիւն մըն ալ տուած է քաղաքի կուսակալ Սիւլէյման Քաճըրի: Ճարտարապետ Գէորգ Էօզգարակէօզ կը տեղեկացնէ, թէ

յառաջիկայ Յունիս ամսուան մէջ կը սկսի քաղաքի «Ռաշխորան» անունով ծանօթ Սուրբ Երրորդուծին եկեղեցւոյ վերաշինութիւնը: Պատուիրակութիւնը Մալաթիա կեցութեան շրջանին այցելած էր նաեւ քաղաքի «Վենք» կոչուած մատուռը, ուր արդէն կը շարունակուէին գրեթէ մարտին հասած վերանորոգման աշխատանքները: Սրբազանը եւ իր ընկերակիցները հոգեհանգիստի կարգ կատարեցին Մալաթիոյ հայոց գերեզմանատան նորակառոյց մատրան մէջ: Այս արարողութեան ներկայ գտնուեցաւ մալաթիացի սակաւաթիւ հայերու կողքին՝ Էլազըղէն ժամանած հայերու 15 հոգինոց խումբ մը: Վերանորոգման ծախսերը պիտի ապահովուին Մալաթիոյ կուսակալութեան կողմէ: Վերաշինութեան նախագիծը պիտի պատրաստեն Գէորգ Էօզգարակէօզ եւ Կարպիս Էւեափան:

## Արցախը երազանք էր մեզ համար՝ իրականություն դարձավ. դիարբեքիրցի հայեր 15.02.2015



Դիարբեքիրցի հայերի՝ Գաֆուր Թյուրքայի, Կարոտ Սասունյանի եւ Արթին Դիյարբաքըրի հետ կանադայի հայկական «Հոլիգոն» շաբաթաթերթի համար հարցազրույց է արել Մելինե Անումյանը: Ներկայացնում ենք հարցազրույցի երկրորդ մասը: Հարցազրույցի առաջին մասը կարող եք կարդալ ԱՅՍԵՂ:

Արթին Դիյարբաքըր- Հայությունն այստեղ նշանակում է օտարից օտար, այսինքն՝ ոչ մի կողմից չընդունված: Անգրագետ եւ կեղծ իսլամականությամբ տարված եղողները հայերին համարում են աշխարհի ամենավատ արարածները: Այս շրջանի բնակչության մեծ մասի, անգամ ծագումով հայ եղողների տեսակետն է դա: Մելինե Անումյան- Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերաբացումը ի՞նչ փոփոխություններ բերեց դիարբեքիրցի հայերի կյանքում: Արդյո՞ք նրանք կարողանում են մկրտվել այնտեղ: Գաֆուր Թյուրքայ- Դիարբեքիում Սուրբ Կիրակոս եկեղեցու վերաբացումը շատ դրական ազդեցություն ունեցավ դիարբեքիրցի հայերի հոգևոր կյանքի վրա: Առնվազն նրանք ունեցան մի վայր, որտեղ կարող են հավաքվել: Մինչ այդ հայկականության մասին խոսելը գրեթէ անհնար էր դարձել: Եկեղեցու բացումից հետո հայկականության մասին հնարավոր դարձավ խոսել յուրաքանչյուր հարթակում: Եկեղեցու վերաբացման հետ հայերն սկսեցին մկրտվել այնտեղ: Մինչ այժմ առնվազն 20 հոգի է կնքվել այս եկեղեցում:

Կարոտ Սասունյան- Եկեղեցին առայժմ միայն հանդիպման վայր է, հասցե, որտեղ մեկտեղվում են ինձ պես՝ իրենց ինքնությունը որոնող հազարավորները: Մկրտության մի քանի արարողություն եղել է, թերևս՝ ցուցադրական: Տերհայր (տերհայր բառը հայերենով է ասում-Մ.Ա.) չունեցող սույն եկեղեցում Ստամբուլից եկած քաղաքաբնակ քահանաները տարեկան մեկ կամ երկու անգամ իրենց ներկայությամբ պատվելով՝ լրիվ քաղաքական նպատակների ծառայող ցուցադրական պատարագ են մատուցել... Այդքանը միայն: Սակայն ընդհանուր հանդիպման վայր դառնալու հանգամանքը մեր նոր հայրենակիցներին օգնեց իրենց ազգականներին գտնելու հարցում: Եվ դա եւս շատ դրական





Թուրքիայի հայերի և Հայաստանի հայերի միջև մեծ շփումներ կլինեն: Քանզի, մեր կարծիքով, այդ երկու հայկական խումբը մեկը մյուսից խիստ կտրված է ապրել: Համոզված եմ, որ նրանց պետք է այդ կերպ իրար հետ հանդիպելու հնարավորություն ունենան:

Կարոտ Սասունյան- Մվիտուքի նախարարության կողմից ձեռնարկված այդ ծրագիրը դրվատանքի արժանի գործ է, որը չպետք է սահմանափակվի միայն Դիարբեքիրով և պետք է շարունակական լինի: Եթե այն փոխադարձ կերպով շարունակվի և առավել ընդգրկուն լինի, ավելի մեծ հաջողություն կունենա: Այդ ծրագրի շրջանակներում Հայաստան այցելած դիարբեքիրցի հայերը հայտնեցին, որ իրենց շատ լավ են ընդունել, և իրենք անգամ իրենց անկախիքները գերազանցած հյուրընկալություն են վայելել: Եթե երկկողմանի մշակութային միջոցառումների, բնաբուսական, առևտրի, ցուցահանդեսների և նմանատիպ այլ միջոցառումների թիվն ավելանան, ու դրանք շարունակական բնույթ կրեն, ծրագիրը կհասնի իր նպատակին:

Արթին Դիարբեքիր- Այդ միջոցառմանը ես էլ եմ հրավիրված: Որոշ պատճառներից ելնելով՝ չկարողացա գնալ:

Մեկին Անույան- Ուզում եմ որևէ բան հավելել: Գաֆուր Թյուրքայ- Այն ամենը, ինչ վերը նշեցի, պետք է հասցնել համայն աշխարհի հայության գիտակցությանը: Համոզված եմ, որ այդ ուղղությամբ շատ անելիքներ ունեն Ձեզ պես մտավորականները և գիտնականները, ինչպես նաև՝ հասարակության առջևից գնացող բոլոր հատվածները: Հավատացած եմ՝ որքան հաճախակիանան մեր ջերմ հարաբերությունները, այնքան շատ ավելի լավ բաներ կանենք: Չմոռանանք, որ այդ ամենը մեր բոլորի գործն է... Հաջողություն եմ մտղում Ձեր աշխատանքներին: Ողջունելով՝ Գյաֆուր Թյուրքայ (Օհաննես ՕՀԱՆՅԱՆ):

Կարոտ Սասունյան- «Մենք, այսինքն՝ Էրզրում ապրող հայերս կրիայի նման ենք: Ամենափոքր շարժման դեպքում ներփակվում ենք մեր պատյանում»: 100 տարի է, ինչ անկախ ամեն տեսակի դժվարության՝ կարողացել ենք, մեր ինքնությունը պահպանելով, այսօրվան հասնել: Հայրենիքին պահակություն անելով՝ պարտավոր ենք անել այն ամենը, ինչ հարկավոր է՝ Անդովկի և Արարատի միջև եղած կամրջի շինարարությունը շարունակելու համար: Արցախը երազանք էր մեզ համար, իրականություն դարձավ: Մոխրի տակ անթելված կրակը բորբոքելով՝ երազում ենք, որ Մեծ Հայաստանը (Մեծ Հայաստանը հայերենով է ստույմ-Մ.Ա.) ևս դադարի երազանք լինել: Մեր պապերն ասում էին՝ «Երբ մի օր աշխարհը Հայաստան դառնա, արի գերեզմանիս մոտ և ինձ ասա դրա մասին: Ահա այն ժամանակ ոսկորներս կվերածնվեն...» (նախադասությունը հայերենով է ստույմ-Մ.Ա.): Մեր նմանները սկզբունք են դարձրել այդ խոսքերը:

## Գերմանացիները տեղյակ էին հայերի սպանդի մասին. նոր փաստեր Tagesschau-ի եթերում

24.02.2015



Գերմանական կայսրությունը Հայոց ցեղասպանության ծրագրման եւ իրագործման հարցի վերաբերյալ փետրվարի 20-ին ARD-ի «Գերմանիայի առաջին ալիք» Մտամբուլի թղթակից Ռայնհարդ Բաունգարթենը մոտ 6 րոպեանոց հաղորդում է եթեր հեռարձակել «Tagesschau» (ARD-ի առաջին լրատվական թողարկում) ծրագրով: Հեղինակը ներկայացնում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հարյուր

հազարավոր հայ քրիստոնյաներ են զոհվել: Գերմանական ու Օսմանյան կայսրությունները հայերի ցեղասպանության ժամանակ դաշնակիցներ էին: Նրանք զինակիցներ էին, երբ Արեւելյան Անատոլիայում հարյուր հազարավոր հայ քրիստոնյաներ էին մեռնում: Հարց է առաջադրվում՝ ի՞նչ գիտեր գերմանացի դաշնակիցը զանգվածային սպանդի, ոճրի մասին: «Շատ բաներ», - համոզված է հեղինակ, լրագրող Յուրգեն Գոթշլիխը՝ մեկնաբանելով, որ Բեռլինի համար սեփական պատերազմական նպատակները, սակայն, ավելի կարեւոր էին:

Հաղորդման հեղինակը եզրակացնում է, որ օսմանյան կառավարության վրա գերմանական ազդեցությունը մեծ էր. Օսմանյան զինված ուժերի գլխավոր շտաբի պետը գեներալ Ֆրիդրիխ Բրոնզարթ ֆոն Շելենդորֆն էր, թուրքական գործի օպերացիոն ղեկավարը Օթո ֆոն Ֆելդմանն էր, իսկ ծովային ուժերի գերմանացի կցորդ Հանս Հումանը ջերմ ընկերական կապեր ուներ տեղահանումների աջակից, պատերազմի նախարար Էնվեր փաշայի հետ:

**Հայերի սպանդը՝ «դաժան, սակայն՝ օգտակար»**  
Յուրգեն Գոթշլիխը Ֆրայբուրգի գերմանական ռազմական արխիվի մի փաստաթղթում գտել է այսպիսի ձեռագիր գրառում՝ քրիստոնյա հայերի զանգվածային սպանդը դաժան էր, սակայն՝ օգտակար: «Tageszeitung» օրաթերթի Թուրքիայի 60-ամյա թղթակիցը հարյուր տարի առաջ Օսմանյան կայսրությունում ծառայության անցած գերմանացի դիվանագետների եւ զինվորականների անթիվ նամակներ, փաստաթղթեր եւ հեռագրեր է տեսել իշյալ արխիվում: «Գերմանիան մասնակցել է տեղահանումների ծրագրմանը», - համոզված է լրագրողը, որն այն կարծիքին է, որ վճռական պահին գերմանացիները կարող էին թուրք իշխանություններին ասել՝ դադարեցրե՛ք. «Նրանք, սակայն, դա չարեցին, քանզի վախենում էին վնասել սեփական պատերազմական նպատակները»:

**Ցեղասպանություն, թե՛ տեղահանում**  
ARD-ի թղթակիցը ներկայացնում է, որ Թուրքիան մինչ օրս վճռականորեն հերքում է Ցեղասպանության մեղադրանքը՝ եղբուրությունը համարելով իբրեւ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանք, երբ «զոհվեցին հայեր եւ մահմեդականներ...»:

Թուրք հրապարակախոս Այդին Էնզինը հակադարձում է այս պնդմանը՝ համոզմամբ, որ այն իսկական պլանավորված դիտավորություն էր:

Նա հաղորդման ընթացքում մեկնաբանում է, որ ծրագրի էությունը հայերին ամբողջությամբ ոչնչացնելը չէր, այլ նրանց, առանց բացառության, իրենց հայրենի բնակավայրերից հեռացնելն էր. «Ես չեմ հավատում, որ ծրագիր կար տեղահանման ճանապարհին սպանելու հայերին: Ամեն դեպքում սրա վերաբերյալ փաստաթղթեր չկան... Այն ամենը, ինչ ուզում էին, այն էր, որ նրանք լքեն Անատոլիան: Սա էր նպատակը»:

Թուրք պատմաբան Թաներ Աբչամը հավատացած է, որ այս քաղաքականությունը դեռ պատերազմից առաջ էր ծրագրվել. «Սա ցեղասպանության քաղաքականություն չէր, սա քրիստոնյաների ամբողջովին բնաջնջման քաղաքականություն չէր: Սա միջոցներ եւ ուղիներ գտնելու քաղաքականություն էր՝ ազատվելու Անատոլիայի քրիստոնյաներից: Հույների դեպքում այն հեշտ էր: Դա երկիր է, դու մտցնում ես նրանց նավերը եւ ուղարկում Հունաստան»:

Հեղինակը նաեւ թվային փաստեր է ներկայացնում նախապատերազմական շրջանի Անատոլիայի բնակչության քրիստոնյա զանգվածի մասին՝ 25-30 տոկոս, այսինքն՝ 4-5 միլիոն մարդ:

**Քրիստոնյաները՝ Օսմանյան կայսրության «ուռուցք»**  
Աբչամը մեկնաբանում է, որ Անատոլիայի քրիստոնյաները դիտարկվում էին իբրեւ հավանական վտանգ, որին պետք էր վճռականորեն դեմ գնալ. «Ի սկզբանե այնպես էր, որ հայերը պետք է վտարվեին Ռուսաստան: Ռուսաստանը, սակայն, նախառնակորդ էր, եւ օսմանյան ռազմական առաջնորդները մտավախություն ունեին, որ հայերը կմիանան ռուսական բանակին»:

Ըստ պատմաբանի՝ թուրքերն օգտագործում էին «ներքին ուռուցք» տերմինը. կարծես թե մի բացի կար մարմնում, որը պետք է հեռացվեր:

**Բեռլինը տեղեկացված էր**  
Գոթշլիխը պատմում է, որ գերմանացիները լիովին տեղյակ էին հայերի սպանդի մասին: Ավելին, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայեիեր ֆոն Վանգենհայմը

օսմանյան տարբեր քաղաքներից զգուշացումներ, բողոքի նոտաներ եւ հեռագրեր էր ստացել: Դիվանագետը 1915թ. հուլիսին բառացիորեն գրել է. «Պետք է ելնել նրանից, որ այն, ինչն այնտեղ կատարվում է, ուղղված է հայկական ռասայի ոչնչացմանը»: Բեռլինը չարձագանքեց. Գերմանիայի իշխանությունները վախենում էին կորցնել դարձակցին:

Գոթշիլիսը պատմում է, որ Վանզենհայմին հաջորդած դեսպան Պաուլ Գրաֆ Մեթերնիխն առաջարկեց օսմանյան իշխանություններին սպառնալ պատժամիջոցներով, եթե նրանք չդադարեցնեն սպանողը: ԱԳ նախարար Գոթթի ֆոն Յագովը դեմ չէր դրան, ինչին, սակայն, կանցրեր Թեոբալդ ֆոն Բեթման Հոլվեգը կտրականապես դեմ արտահայտվեց. «Մետերնիխը տարբերվում էր Վանզենհայմից: Նա փաստացի փորձեց դադարեցնել Յեղասպանությունը»:

Գոթշիլիսը իր «Նպաստ ցեղասպանությանը» գրքում եզրակացնում է, որ Գերմանիան ուներ քաղաքական կշիռ, ինչպես նաև տնտեսական եւ ռազմական լծակներ՝ դադարեցնելու հայերի զանգվածային մահը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիայի մեջլիսում Դավութօղլուին հայերենով գրավոր հարցադրում է ուղղվել

24.02.2015



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության պատգամավոր Գյուլսեր Յըլդըրըմը Թուրքիայում վտանգի տակ գտնվող լեզուների պահպանության հետ կապված 8 լեզվով գրավոր հարցադրում է ներկայացրել Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուին:

Թուրքական Bianet կայքի փոխանցմամբ՝ HDP-ի Մարդինից ընտրված պատգամավոր Գյուլսեր Յըլդըրըմը Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուին ուղղված գրավոր հարցադրում է ներկայացրել Թուրքիայի խորհրդարան՝ շեշտելով, որ Թուրքիայում 18 լեզու, որոնցից են քրդերենը, վրացերեն, համալեներենը, հայերենը, ասորերենը եւ այլն, գտնվում են վերացման վտանգի տակ: Նա շեշտել է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկուլոցներից մեկում նշվել է, որ Թուրքիայում 3 լեզու արդեն անհետացել է եւ 18-ն էլ գտնվում են վտանգի տակ:

Քուրդ պատգամավորն իր հարցադրումը ներկայացրել է 8 լեզվով, այդ թվում հայերենով եւ հայերենի բարբառ համարվող համալեներենով:

«Ի՞նչ է ձեր կառավարության քաղաքական մեթոտները՝ Թուրքիոյ մէջ զանազան լեզուներուն ճանչցուելուն, պաշտպանութեան և զարգացման մասին», -եղել է հարցադրման մեջ:

Ax şullonũtho monoy politiq̃ dũxun metul nutoro wşuşoto wmaqblonũtho dleşone mşahife dab ʻTurkiya?

أهي مبادئكم الحكومية في مجال الاعتراف وتمويل اللغات المختلفة والحفاظ عليها في التركية

туркием шынсаурэ бээхэр ажгьэздэным фэщкь, жьгьэгьунэу жьгьэбгьоньм фэщкь сыды фэдэ гьыоу шьурик1он рары? (turkiyem şipşewure bexer yajügedenim feşkg, jügeşunew jügebegonim feşkg sidi fede şögu şürik1on ran?)

Ji bo kũ li Turkiye zimanên ji hev cûda bèn nasin, bèn parastin û pêşvebiçin politikayên hukûmeta we çî ne?

Türkiye'de farklı dillerin tanınması, korunup geliştirilmesi için hükümet politikalarını nelerdir?

Türkiye na on çkva do çkva nenapeşi ocinu, oşinaxu do omçxwanu şeni hukumethuri politikapetkvani muperepe on?


Ի՞նչ է ձեր կառավարութեան քաղաքական մեթոտները՝ Թուրքիոյ մէջ զանազան լեզուներուն ճանչցուելուն, պաշտպանութեան և զարգացման մասին:

Türkiye'is wış wış lizuneran cançewşin, bahuşin u soyseneuşin hama hukumati politikanerê inçer inç?

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիան 1 մլն է վճարել Եգիպտոսին՝ Յեղասպանության հետքերը վերացնելու համար

24.02.2015



Թուրքական իշխանությունները 1 մլն դոլար են վճարել Եգիպտոսի «Մուսուլման եղբայրներին»՝ երկրում գտնվող Հայոց ցեղասպանության ապացույց հանդիսացող փաստաթղթերի վերացման համար:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Demokrathaber կայքը՝ վկայակոչելով եգիպտական Veto թերթին, Եգիպտոսի կառավարության նիստին «Ջիհադ» կուսակցության հիմնադիր Շեյխ Նաբի Նահիմը հայտարարել է, թե Թուրքիան 1 մլն դոլարն անցնող գումար է տվել Եգիպտոսին՝ Հայոց ցեղասպանության հետ կապված փաստաթղթերը վերացնելու համար: Նա վերացված փաստաթղթերի համար մեղադրել է «Մուսուլման եղբայրներին» որոշ անունների:

Եգիպտական թերթում նշվել է, որ Հայոց ցեղասպանության հետ կապված եւ «Մուսուլման եղբայրների» կողմից այրած փաստաթղթերը Թուրքիային միջազգային դատարաններում դժվարին կացության մեջ էին դնելու:

Շեյխ Նաբի Նահիմը պնդել է, թե այդ փաստաթղթերի վերացման համար Եգիպտոսը պետք է պատժի Թուրքիային:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Պոլտ հայոց փոխպատրիարքը՝ մուսուլմանացած հայերի՝ արմատներին վերադարձի մասին

26.02.2015



Ստամբուլի Ֆերիքյոյի Սուրբ Վարդանանց եկեղեցու անվանակրոյությանը եւ «Վարդանանց» երգչախմբի հիմնադրման 83-րդ ամյակին նվիրված ընդունելության ժամանակ ելույթ ունեցած Պոլտ հայոց պատրիարքի գլխավոր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանն անդրադարձել է բազմաթիվ խնդիրների՝ իսլամացած հայերից մինչև խառնամուսուլություններ:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը՝ վկայակոչելով Ստամբուլի հայկական «Ակոս»-ին, Ֆերիքոյի Սուրբ Վարդանանց եկեղեցու անվանակոչության օրը եւ «Վարդանանց» երգչախմբի հիմնադրման 83-րդ տարեկիցը նշվել է կիրակի օրը՝ փետրվարի 15-ին, կայացած ընդունելության ժամանակ: Եկեղեցու «Նազար Շիրինօղլու» սրահում կազմակերպված միջոցառմանը մասնակցել է նաեւ Պոլսոյ հայոց պատրիարքի գլխավոր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթենյանը, ով անդրադարձել է տարատեսակ հարցերի, այդ թվում՝ իսլամացած հայերի եւ խառնամուսնությունների թեմաներին: Արքեպիսկոպոս Աթենյանի ելույթի հիմնական շեշտադրումները հետևյալներն են.

«Հայ եւ ասելով՝ հայ չես դառնա»  
«Ընդունենք թե ոչ՝ որպես համայնք հեռացել ենք մեր կրոնական հավատքից: Կրոնը ետին պլան է մղվել մեզ համար: Եթե հնարավոր է հայերեն խոսելով հայ դառնալ, ապա ինձանից շատ ավելի լավ հայերենով հաղորդակցվող մի շարք մահմեդականներ կան: Հա՛յ են նրանք: «Իմ մեծ մայրը հայ է եղել»... Քո մեծ հայրն էլ մուսուլման էր: Ո՛րմ արյունն ես կրում դու: Հայը կրոնից անքակտելի մի ամբողջություն է: Եթե ուզում ես հայ լինել, կգաս կմկրտվես, Հայոց եկեղեցու անդամը կդառնաս եւ միայն այն ժամանակ կասես՝ «Ես հայ եմ»: Այդ հավատքի համար պատերազմներ են մղվել, այդ դավաճանքի համար մինչեւ 20-րդ դարի սկիզբ գոհեր ենք տվել: Հիմա չենք կարող մեր պապերի թափած արյունը ժխտել»:

«2170 եկեղեցուց 42-ն են մնացել»  
«Մեկտեղվել ենք՝ Վարդանանց եկեղեցու անվանակոչության օրը եւ եկեղեցու երգչախմբի հիմնադրման ամսակը նշելու նպատակով: Եկեղեցին ունի մեկ ու կես հարյուրամյակի, իսկ երգչախումբը՝ մեկդարյա պատմություն: Հայացք գցեք 1914 թվականի օրացույցներին. Օսմանյան կայսրության սահմանների ներսում կան հայկական 2170 եկեղեցիներ ու 100 դպրոցներ: Որտե՛ր են այժմ դրանք: Մեր ձեռքին 42 եկեղեցի եւ 13 դպրոց է մնացել: Մեր դպրոցների եւ եկեղեցիների նկատմամբ Ձեր սերը ո՞ր չափանիշով է սահմանվում: Դրա՛նք էլ ենք մեր ձեռքից փախցնելու: Մեր պապերն իրենց գոհեցին՝ հանուն նրա, որ մեր եկեղեցիներն ու դպրոցները կանգուն մնան»:

«Խառնամուսնությունները սպիտակ ցեղասպանություն են»  
«Եվրոպայում քրիստոնեությունը մեռած վիճակում է: Գնացեք Ֆրանսիա. դպրոցներում արգելված է խաչ կրել: Այստեղ մուսուլման երկրում ես. ուզածիդ չափ խաչ կրի, ոչ ոք քեզ բան չի ասի: Այնինչ, մենք մեր իսկ հանդեպ սպիտակ ցեղասպանություն ենք իրականացնում: Խառնամուսնությունները սպիտակ ցեղասպանություն են: Օտարագիներին մեր դպրոցներ, հաստատություններ ընդունելը եւս սպիտակ ցեղասպանություն է: Մենք մեզ ոչնչացրեցինք: Մի փոքր գիտակից լինենք»:

«Պարտավոր ես ապացուցել քո հայ լինելը»  
«Հայաստանը մի քանի տարի է, ինչ քաղաքացիություն է շնորհում սփյուռքի բոլոր հայերին, սակայն՝ մկրտության մասին փաստաթղթի առկայության պարտադրանքով... Պարտավոր ես ապացուցել քո հայ լինելը: Չես կարող քաղաքացիություն ստանալ՝ «Ես հայ եմ»ասելով: Չես կարող քաղաքացի դառնալ՝ հայերեն խոսելով միայն: Հայաստանն ասում է՝ «Մկրտության մասին փաստաթուղթը բեր, ապացուցի քո հայ լինելը, որ քեզ քաղաքացիություն շնորհեն»... Մենք ումից ի՞նչ ենք պահանջում: Աշակերտներից մկրտության փաստաթուղթ ենք ուզում: Դեկավար խորհրդի անդամներից մկրտության փաստաթուղթ ենք պահանջում: Որտեղի՞ց ենք իմանում, թե ինչ է: Ասում է՝ «Հայ եմ», հայերեն է խոսում, հերիք է: Մեր կրոնն այդչափ էժանագին չափեր է լինի: Եթե մենք հայ ենք, քրիստոնյա ենք, ապա պետք է պահպանենք մեր կրոնն ու ինքնությունը: Տեր կանգնենք մեր բոլոր ազգային եւ կրոնական արժեքներին: Թե չէ՛ դատարկ խոսք է «Ես հայ եմ» ասելը: Այս հարցի շուրջ ասելիք շատ կա. մեր տառապանքները չափից դուրս շատ են: Սակայն այսօր այդքանով եմ բավարարվելու, քանզի այսօր ուրախության օր է: Շնորհավորում եմ «Վարդանանց» երգչախմբի յուրաքանչյուր անդամին: Միևնույն ժամանակ, քանի որ եկեղեցու անվանակոչության օրն է, շնորհավորում եմ նաեւ դեկավար խորհրդին: Աստված ամուր պահի կանգուն մնացած մեր եկեղեցիները, քանզի 1915-ից հետո չափից դուրս շատ ենք եկեղեցի կորցրել»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Մվլուռք

### «Իսլամական պետության» գրոհայինները Մոսկվում հրդեհել են հայկական եկեղեցին

27.01.2015



«Իսլամական պետության» գրոհայինները Իրաքի հյուսիսում գտնվող Մոսկու քաղաքում հրդեհել են հայկական հնագույն եկեղեցիներից մեկը: Այս մասին հաղորդում է [BasNews](#)-ը:

Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Սայեդ Մամուզինիի խոսքով՝ ԻԳ-ի գրոհայինները շարունակում են հրդեհել եւ ավերել հանրային նշանակության շինությունները, շենքերը, պղծել սրբատեղիները: Գրոհայինները այրել են նաեւ Մոսկուի Վահդա շրջանի հայկական եկեղեցին: Գործակալության փոխանցմամբ՝ հայերն ու այլ քրիստոնյաները լքել են քաղաքը, երբ գրոհայինները գրավեցին այն 2014-ի հունիսին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Հայաստանի արտգործնախարարը հանդիպեց Քրդստանի ինքնավարության նախագահին

07.02.2015



Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը փետրվարի 7-ին Մյունխենում հանդիպեց Իրաքյան Քրդստանի նախագահ Մասուդ Բարզանիին:

Հանդիպմանը քննարկվեցին Հայաստանի եւ Քրդստանի ինքնավարության միջեւ կապերի զարգացմանն առնչվող մի շարք հարցեր: Քրդստանի դեկավար Մասուդ Բարզանին ողջունեց Էրբիլում գլխավոր հյուպատոսություն հիմնելու Հայաստանի որոշումը եւ վստահություն հայտնեց, որ այն կնպաստի համագործակցության ընդլայնմանը: Զրուցակիցները քննարկեցին առևտրատնտեսական փոխգործակցության խորացման նպատակով ձեռնարկվելիք համատեղ քայլերը: Նախագահ Բարզանին եւ նախարար

Նայրանդյանը համակարծիք էին, որ Էրբիլի եւ Երեւանի միջեւ ուղիղ չվերթի մուտայուտ մեկնարկը նոր լիցք կհաղորդի գործարար կապերին:

Հանդիպման օրակարգում էին տարածաշրջանային զարգացումները, ծայրահեղականների դեմ միջազգային հանրության պայքարը: Իրաքյան Քրդստանի առաջնորդը Հայաստանի արտգործնախարարին հանգամանակից ներկայացրեց ահաբեկիչների գործողությունների արդյունքում Իրաքի հյուսիսում ստեղծված իրավիճակը եւ ահաբեկչական խմբավորումների դեմ փեշմերգայի կողմից իրականացվող պայքարը: Այս առումով նախարար Նայրանդյանը կարեւորեց Իրաքի հյուսիսում ապրող ազգային եւ կրոնական փոքրամասնությունների, մասնավորապես՝ եզդիների անվտանգության ապահովումը, եւ վերահաստատեց Հայաստանի համերաշխությունը ծայրահեղականների դեմ միջազգային հավաքական ջանքերին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված համերգ Թեհրանում

24.02.2015



Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Թեհրանի հանձնախմբի նախաձեռնությամբ՝ փետրվարի 22-ին Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության «Ամիտաս» սրահում կազմակերպվեց համերգ, որին հրավիրված էին Իրանում հավատարմագրված օտարերկրյա բոլոր դեսպաններն ու դեսպանատների աշխատակիցները, իրանահայ համայնքի մի շարք ներկայացուցիչներ: Այս մասին հայտնում է «Հայերն այսօր»-ը:

Աղբյուրի փոխանցմամբ՝ միջոցառմանը ներկա էին Ուրուզվայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Կիպրոսի, Հնդկաստանի, Բուլղարիայի, Ճապոնիայի և Հայաստանի դեսպաններն ու նրանց ներկայացուցիչները, թեհրանահայ համայնքի շուրջ 350 անդամ:

## Հասարակական

Դր. Էդիկ Բաղդասարյան

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՄԱՆԻՖԵՍՏ**

(Ծրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)

2014 Տորոնտո – Կանադա

ISBN: 978-1-927860-27-4

Սկիզբը նախորդ համարից

**Հայ Ազատագրական Պայքարը Եւ**

**Հայկական Հարցը**

Հայ ժողովուրդը Առաջավոր Ասիայի քաղաքակրթության հնագույն կրողներից է, որի հարատեւումը նրա ազատագրական ոգու եւ պայքարի փայլուն առհավատչյան է: Դարեր շարունակ ազատագրական պայքարը եղել է նրա գոյատեւման

անհրաժեշտ պայմանը եւ արտահայտություն գտել նրա կյանքի տարբեր ոլորտներում՝ հասարակական-քաղաքական, մշակութային ու ռազմական:

Եւ իրոք, հայ ժողովուրդը ազատագրական պայքար է մղել, մահու եւ կենաց կռիվ էլել հոռմեական լեգեոնների (I դ. մ. թ. ա.), պարսիկների (V դ.), արաբների (VII—IX դդ) դեմ: Նա վճռական դիմադրություն է ցույց տվել Բյուզանդական կայսրության հայահալած քաղաքականությանը, որի հետեւանքով XI դ. վերացվեցին Տարոնի, Տայքի, Վասպուրականի, Անիի, Կարսի հայկական թագավորությունները, նաեւ Բյուզանդիայի հակահայկական ընթացքով պիտի բացատրել սելջուկների արշավանքների հաջողությունը Փոքր Ասիայում եւ այնտեղ նրանց հաստատվելը: Այս շրջանում ուժեղացավ հայերի հուսքը դեպի Կիլիկիա, որտեղ 1080 թ. հիմնվեց Ռուբինյանների իշխանությունը: Ռուբինյան իշխանները, հմտորեն օգտագործելով թուրք-սելջուկների, խաչակիրների եւ Բյուզանդական կայսրության հակասությունները, կարողացան ընդարձակել իրենց տերիտորիան եւ ստեղծել Կիլիկիայի հայ- կական թագավորությունը: Արդեն XII դարի առաջին կեսին այդ թագավորությունը բավականաչափ ուժեղացավ եւ Լեւոն II-ի ժամանակ հասավ իր հզորությանը:

Թաթար-մոնղոլական արշավանքները XIII դ. ահավոր ավերածության ենթարկեցին Հայաստանը: 1236 թ. վերջ տրվեց Զաքարյանների իշխանությանը: 1424 թ. նույն ճակատագրին արժանացավ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Եգիպտական մամլուկները Կիլիկիայի մայրաքաղաք Միսր գրավելուց հետո, կործանեցին հայկական թագավորությունը: Թուրքերի նախորդները՝ Թուրքիլ ցեղապետի գլխավորությամբ Միջին Ասիայից Անատոլիա թափանցեցին XIII դ.: Թուրքիլի մահվանից հետո նրա որդին՝ Օսմանը 1299 թ. ստեղծեց իր պետությունը, որը նրա անունով էլ հետագայում կոչվեց Օսմանյան կայսրություն: Օսմանի հաջորդը՝ նրա որդի Օրխան, ստեղծելով կազմակերպված բանակ, սրի ու հրի ուժով սկսեց ընդարձակել իր տիրակալությունը: Նա գրավված Բրուսան դարձրեց պետության մայրաքաղաք ու սկսեց հարձակումներ գործել արդեն իր հզորությունը կորցրած Բյուզանդիայի վրա: Սուլթան Մուրադի օրոք թուրքերը սկսեցին տարածվել Բալկաններում, իսկ նրա որդի Բայազիտն ավելի ընդլայնեց օսմանյան աշխարհակալությունը:

1387 թ. Հայաստանն ընկավ Լենկթեմուրի բռնապետության տակ: 1402 թ. Լենկթեմուրը Անկարայի մոտ Բայազիտին գերեվարեց, դա ժամանակավորապես հետաձգեց օսմանյան տիրակալության հետագա ընդարձակումը: Սակայն սուլթան Մահմուդը 1453 թ. մայիսի 29-ին գրավեց «Երկրորդ Հոռմը»՝ Կոստանդնուպոլիսը, եւ վերջ տվեց Բյուզանդական կայսրությանը:

Փոքր Ասիայում եւ Բալկաններում սուլթանի տիրակալության հաստատումը մեծագույն շարիք էր բազմաթիվ ենթակա ժողովուրդների համար: Անդրկովկասում, զգալի ավերածությունների պատճառ դարձան նաեւ աղկոյունլու եւ կարակոյունլու ցեղախմբերի հակամարտությունները, որոնք ավարտվեցին աղկոյունլու ցեղապետի Ուզուն

Հասանի հաղթանակով: Նրա իշխանության տակ ընկավ նաև Հայաստանը:

Սուլթան Սելիմը, սակայն, ետ խլեց Հայաստանը, 1517 թ. գրավեց Կիլիկիան, ապա Սիրիան ու Եգիպտոսը: Իսկ նրա որդին Սուլեյմանը, Օսմանյան կայսրության հզորությունը հասցրեց իր գագաթնակետին, նրա տիրակալության սահմանները ձգվում էին Լեհաստանից, Ուկրաինայից եւ Հյուսիսային Կովկասից մինչև Հնդկական օվկիանոս, Ջագրոսի լեռներից մինչև Ատլանտյան օվկիանոս<sup>1</sup>:

Վիեննան գրավելու եւ Եվրոպային տիրելու համար 1683 թ. նոր արշավանք ձեռնարկվեց: Դա վերջին փորձն էր: Ավստրիացիների, լեհերի եւ մյուս ժողովուրդների միասնական հարվածով Կարա Մուստաֆա փաշայի հզոր բանակը ջախջախվեց: Նրա դեմ լեհական բանակի շարքերում կռվում էին ոտ 5 հազար լեհաբնակ հայեր:

Ավելի քան երկուսուկես դար տևող (1473 — 1746) օսմանա-պարսկական պատերազմների ընթացքում Հայաստանն ահեղ մարտերի թատերաբեմ դարձավ: Երկիրն ամբողջությամբ ավերածության ենթարկվեց, բնակչության գերակշռող մասը ոչնչացվեց: Արտագաղթը դարձավ կործանարար շարիք: Բնակչության հարկադիր տեղաշարժերից բացի, որ կատարեցին Շահ Աբբասը եւ ուրիշ տիրակալներ, բնակչության մի զգալի մասը, չտանելով անլուր հալածանքները, դիմում էր պանդխտության: Այս ամենի հետեանքով Հայկական լեռնաշխարհը բնակեցվեց թուրք եւ այլ ցեղերով: Չնայած դրան, հայերը շարունակում էին մեծամասնություն կազմել: Եվրոպացի ճանապարհորդ Տավերնիեն, որ 1632 — 1668 թթ. ընթացքում վեց անգամ այցելեց Մերձավոր Արևելք, գրում է, որ անցնելով Թուրքասից մինչև Թավրիզ, նախկինում Հայկական նահանգ կոչվող այդ տարածության վրա, քաղաքներում ու գյուղերում մեկ մահմեդականի դիմաց հիսուն հայ էր հանդիպում<sup>2</sup>:

Թուրքական պետությունը ի սկզբանե հպատակ ալլադավան ազգություններին իրեն ձուլելու քաղաքականություն էր վարում: Պատմությանը հայտնի է, որ մի շարք սուլթաններ քրիստոնյաներին սրի քաշելու որոշում են ընդունել: Հենց այդ նպատակով էին ստեղծվում ենիչերիների գնդերը, որոնք կազմվում էին տուրքի դիմաց տարված եւ մահմեդականացված քրիստոնյա պատանդներից: Հավատափոխությանը նպաստում էր նաև գլխահարկը: Չափազանց ծանր ու գանձման եղանակներով դաժան այդ հարկը ստիպում էր ոմանց մահմեդականություն ընդունել, որպեսզի դրանով ազատվեն անընդհատ սաստկացող ճնշումներից ու շարժերից:

Օսմանյան կայսրությունում նույնիսկ գույք ունենալու, մինչև անգամ կրոնական արարողություն կատարելու թույլտվությունը կախված էր սուլթանների գթությունից, որ ձեռք էր բերվում զանազան հնարամտությունների կամ էլ կաշառք տալու միջոցով: Քրիստոնյաների «գլավուրների» խոսքը, երդումը որեւէ արժեք չունեին, նրանց վկայությունը հաշվի չէր առնվում: Դա նշանակում

էր, որ Օսմանյան կայսրության մեջ քրիստոնյաները մահմեդականների հանդեպ իրենց իրավունքները պաշտպանելու ոչ մի երաշխիք չունեին: Տիրողը կարող էր իրեն ենթակա քրիստոնյային նույնիսկ սպանել, բռնագրավել նրա ունեցվածքը եւ մնալ անպատիժ: Մի երկրում, որտեղ շարքային աստիճանավորից մինչև սուլթանը կաշառք էին վերցնում, որեւէ օրինականության մասին չէր կարող խոսք լինել: Եվ իսկապես, «անհուն կամայականությանց թագավորություն էր Օսմանյան կայսրությունը, ու մեծ վեզիրներն անգամ ապահով չէին, թե վաղը ո՞րչ պիտի մնային: Այդ կացության մեջ ինչպես կարող էր ապահով ըլլալ բայան, որուն նկատմամբ ոչ մեկ բռնություն, ոչ մեկ արդարություն արգելված չէր»<sup>3</sup>:

Հայ ժողովուրդն այդպիսի ստորացուցիչ պայմաններում շարունակում էր փրկության ուղիներ որոնել, ձգտում էր ազատագրվել օսմանյան բարբարոսական լծից:

Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը ժողովրդի ազատագրական պայքարն էր անկախության համար: Սակայն ի՞նչ միջոցներով: Կարող էր արդյոք հայ ժողովուրդը միայն սեփական ուժերով հասնել այդ նպատակին: Թուրքիայի ծանր լծի տակ գտնվող արաբ, հույն, հայ, քուրդ եւ Իսրայելյան թերակղզում բնակվող բազմաթիվ այլ ժողովուրդների ազատագրության միակ իրական երաշխիքը միասնական պայքարն էր: Բայց ավատատիրական կտրտվածությունը, տնտեսական ու քաղաքական հետամնացությունը եւ ազգային ու կրոնական հակասությունները, ինչպես նաև եվրոպական տերությունների մեքենայությունները, արգելակում էին ճնշված ժողովուրդների միասնական ճակատի ստեղծումը:

Ենելով ստեղծված դրությունից, հայ հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք այն կարծիքն էին հայտնում, թե հայ ժողովրդի ազատագրման համար անհրաժեշտ է դիմել եվրոպական տերությունների օգնությանն ու միջամտությանը, որովհետև սուլթանական բռնապետության ու ռազմական դիկտատուրայի պայմաններում ապստամբական փորձերը վերջանում են արյունալի շարժերով: Կարծիքների բախում էր տեղի ունենում նաև այն կապակցությամբ, թե Հայաստանի ազատագրման հովանավորը ո՞վ պետք է լինի, Արևմտյան տերությունները, թե՞ Ռուսաստանը:

Հասկանալի էր, որ այս խնդրի արժարժման ընթացքում հաշվի էր առնվում մեծ տերությունների յուրաքանչյուրի շահագրգռվածությունը: Իսկ մեծ տերությունները, պարզ է, ելնում էին իրենց գաղութարարական ծրագրից եւ աշխատում օգտագործել ամեն մի առիթ, որպեսզի միջամտեն Թուրքիայի ներքին գործերին եւ Մերձավոր Արևելքում հարմար դիրք գրավեն<sup>4</sup>:

<sup>1</sup> - Մ.Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 21-22:

<sup>2</sup> Les six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie et Perse et aux Indes, Paris, 1713, v. I, p. 48.

<sup>3</sup> - Արշակ Ալբոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 823:

<sup>4</sup> - Մ.Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 24:

Հայ ազատաբազմ գործիչներին հուսադրում էին միջին դարերում ծայր առած խաչակրաց արշավանքները եւ հատկապես 1645—1669 թթ. Կրետե կղզում Իտալիայի (Վենետիկի հանրապետության) եւ Թուրքիայի միջ եւ ավելի քան քառորդ դար շարունակվող պատերազմները: Վենետիկի հանրապետությունը, որ ժամանակի միջազգային առևտրի ասպարեզում կարելու դեր էր խաղում, նպատակ էր դրել տիրել Միջերկրականի արեւելյան ափերին: Դրանում շահագրգռվածություն էր հանդես բերում նաեւ Ֆրանսիան, իսկ Հռոմի պապը ձգտում էր պատերազմին նոր խաչակրաց արշավանքի տեսք տալ:

Այդ հանգամանքը Թուրքիայի բռնապետության տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին՝ հույներին, հայերին, ասորիներին, Բալկանների սլավոնական ժողովուրդներին ազատության նոր հույսեր էր ներշնչում:

(Շաբ. 3)

## Փետրվարյան արկածախնդրությունը

Էդիկ Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ)  
«Հայ Պետականության Պատմություն»- Հ. 5» էջ 21-42

ԱՄՆ-ի, Անգլիայի եւ Ֆրանսիայի իմպերիալիստները բազմապիսի օգնություն ցույց տալով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերին, նպատակ էին դրել ձեռք բաց չթողնել Անդրկովկասը Ֆրանսիական «գերագույն կոմիսար» Ա. Շեւալյեն 1920 թ. դեկտեմբերի 18-ին թիֆլիսում մենչեւիկյան Վրաստանի Հեռագրատան գործակալության աշխատակցի հետ ունեցած գրուցում հայտարարել է, որ ամբողջ (իմպերիալիստների) աշխարհի շահերը պահանջում են Հայաստանի եւ Ադրբեջանի Սովետական իշխանությունների տապալումը: Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին, անգլիական «Թայմս»-ը գրել է. «Դաշնակների լիդերներն այս ամսի սկզբին թիֆլիսում ունեցած կոնքերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ...»<sup>5</sup>: Սակայն թերթը միաժամանակ նշել է, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնությունը դաշնակցականներին:

Նշված իմպերիալիստական պետությունների թելադրանքով եւ օգնությամբ այդ ժամանակ մենչեւիկյան Վրաստանում (Թիֆլիսում) կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կավկասի Լեռնային Հանրապետության «փրկության կոմիտեներ»:

Այդ ժամանակ Հայաստանի ծայրամասերում սովետական իշխանությունը չէր հասցրել բավարար քաղաքական աշխատանք կատարել: Մյուս կողմից դրուժյունը անբարեհաջող էր նաեւ այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքակա- նության կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ եւ սխալներ<sup>6</sup>:

Հայաստանի Ռեկոմը, որի կազմի մեջ խցկվել էին պատեհապաշտ տարրեր, դաշնակցականների եւ մյուս հակահեղափոխական կուսակցությունների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ: Իսկ դաշնակցականների մի մասը,

որոնք տակտիկական նկատառումներով քողարկված էին «ձախ» պիտակի տակ, ազատ կերպով ման էին գալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքում եւ մյուս շրջաններում: Նրանցից ոմանք տեղավորված էին սովետական ապարատում, բանակում, նույնիսկ ղեկավար դիրքերում, եւ գաղտագողի դավեր էին նյութում բանվորների ու գյուղացիների պետության դեմ: 1920 թ. դեկտեմբերի կեսերին Երեւանում կազմակերպվում է դաշնակցության անլեզալ կոմիտե: Արկածախնդրության ամբողջ նախապատրաստումը վերցնելով իր ձեռքը, այդ կոմիտեն սերտ կապ է հաստատում Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց թաքնված ուժերը՝ Բաշ-Գյառնի, Աշտարակ, Էջմիածին, Դարալազյազ:

Հարկ է նշել, որ օգտվելով Սովետական Հայաստանի նորաստեղծ կարմիր բանակում ունեցած ղեկավար դիրքից, Դրոն գաղտագողի իր շուրջն էր համախմբում սովետական իշխանության թշնամիներին: Հայաստանի կարմիր բանակի շտաբում եւ մի շարք ղեկավար պաշտոններում նա տեղավորել էր դաշնակցական սպաների, որոնք արժեքավոր հետախուզական տվյալներ վերցնելով կարմիր բանակի ուժերի դասավորության մասին, փետրվարյան արկածախնդրության նախօրյակին փախել էին Բաշ-Գյառնի: Դրանց թվում էր Ս. Թարխանյանը (Կուռոն), որը արկածախնդրության ժամանակ գլխավորեց դաշնակցականների զինված ուժերի ռազմական գործողությունները<sup>7</sup>:

Հայաստանում իրենց հենակետն էին դարձրել Զանգեզուրը՝ ուր հավաքվել էին Նժդեհ, Ռուբենը եւ անգործ մնացած մտուցերիստներ: Մյուս կողմից կապեր էին հաստատվել Թավրիզի միջոցով անգլիացիների եւ Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը<sup>8</sup>:

Հայաստանում քաղաքացիական կռիվներն սկսվեցին տարերայնորեն եւ ընդգրկեցին մի շարք շրջաններ, ինչպես Կոտայքը, Բաշ-Գյառնին (Գառնի), Դարալազյազը, Բաշ-Ապարանը եւ Հայաստանի կենտրոնի այլ տարածքներ: Այդ զինված խռովության գլուխ էին կանգնել նախկին խմբապետ-եր Մարտիրոսը, Կարո Սասունին, Խնկոն եւ ուրիշներ: Փետրվարի 16–18-ը ապստամբները մի շարք շրջաններում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը եւ մտան Երեւան: Նրանց օգնեց այն հանգամանքը, որ 11-րդ բանակի զորամասերը դուրս էին բերվել Հայաստանից՝ Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցելու համար: Երեւանում ստեղծվեց «Հայրենիքի փրկության» կոմիտե՝ Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Վերջինս հրապարակեց հրաման այն մասին, որ «բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչեւ կառավարության կազմվելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում»:

Խորհրդային Հայաստանի պետական եւ բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմինները Հայաստանի բանակի իրենց հավատարիմ ուժերով եւ 2 զրահագնացքով հեռացան Երեւանից: Նրանք կենտրոնացան Ղամարու (Արտաշատ) - Վեդի-Բասար (Արարատ) շրջանում, ընկնելով ապստամբների շրջապատման մեջ: Խորհրդային իշխանությունը պահպանվեց հիմնականում Համամյուլ (Սպիտակ) - Ղարաքիլիսա (Վանաձոր) - Դիլիջան - Շամաչի (Տավուշ) գոտում:

Ռազմական գործողություններն սկզբում ընթանում էին փոփոխակի հաջողությամբ, իսկ ռուսական զորամասերի

<sup>5</sup> - Հ. Էյլիբեկյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 89-90:

<sup>6</sup> - Նույն տեղում:

<sup>7</sup> - ՀԺՊ, Կ. 7, էջ 138:

<sup>8</sup> - Նույն տեղում էջ 94:

վերադարձից հետո ուժերի հարաբերակցությունը դասավորվեց ի վնաս ապստամբների: Ռուսական 11-րդ բանակի ուժերով կազմավորվեց Երեւանի ուղղության զորքերի խումբ, որը խնդիր ստացավ ճնշել ապստամբությունը եւ զրավել Երեւանը: Երեւանի վրա հարձակումը կատարվում էր Սեւանի եւ Համամուլի (Սպիտակ) ուղղություններով:

Ձոհերից խուսափելու համար 11-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն մարտի 20-ին վերջնազիր ներկայացրեց «Հայրենիքի փրկություն» կոմիտեին: Նույն օրը Թիֆլիսից Երեւան ժամանեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա հանդես էր եկել հողվածներով եւ ներագրային պայքարն ու մարդկային զոհեր տալը համարում էր բախտախնդիրների գործ: Ազգային մեծ գործիչը ցավ էր ապրում ժողովրդի արյունը թափելու համար: Նրա համար գլխավորը համագրային շահերն էին, հաշտությունը, ուստի Կարմիր բանակին եւս կոչ էր անում դադարեցնել անխմաստ պատերազմը: Խորհրդային զորքերը ապրիլի 2-ին մտան Երեւան, որտեղ վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

Ապստամբները, հաշիվ առնելով ուժերի խիստ անհավասարությունը եւ իրենց փրկելու իրենց նոր զոհերից, այլեւս դիմադրություն ցույց չստացան: Նրանք Բաշ-Գյուլանի վրայով նահանջեցին Ջանգեզուր, որտեղ շարունակվում էին Գարեգին Նժդեհի ղեկավարած ինքնապաշտպանական մարտերը: Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակն անխուսափելի էր, քանի որ այդ իշխանության թիկունքում կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը:

Ապստամբներ միայն կարողացան իրենց ընկերներին բանտարկությունից ազատել: Այնուհետեւ իշխանության գրավումը, ուժերի գոյություն ունեցող հարաբերակցության պայմաններում, հեռանկար չուներ: Հետեւաբար դաշնակցության կողմից քաղաքացիական պատերազմի բորբոքումը իզուր արյուն թափել ու զոհեր տալ էր նշանակում եւ Հէր բխում ազգային շահերից:

Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում դաշնակցականներին խոշոր չափով օգնել է քեմալական Թուրքիան: Այդ մասին Հայաստանում գործող Կարմիր բանակի գորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի փոփոխագրում ասված է. «Փետրվարի 16-ին թուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մեկնել Շահխախտ, ընդ որում մոտիկ կանգնած գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահխախտի եւ Նախիջևանի շրջանում: Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը նախապատրաստվում էր վաղուց եւ հետեւանք էր դաշնակցականների ու թուրքերի միջեւ տեղի ունեցած հարաբերությունների: Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է եւ տարվում է թուրքերի ղեկավարությամբ...»<sup>9</sup>: Հայաստանի պետական արխիվում կա մի այլ փաստ ֓ետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում Թուրքիայի բացահայտ մասնակցության մասին, եւ դա վերաբերում է Հայաստանի Արտաքին գործերի ժողովրդիսարի նոտային որը ուղարկվել է թուրքական բանակի արեւելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին, որում բողոք է ներկայացվում կապիտան Բահադդինի (Թուրքիայի արեւելյան ճակատի զորքերի հրամանատարու-

թյան ներկայացուցիչը Երեւանում - «Հայաստանի փրկության կոմիտեի» մոտ) վարքագիծը Հայաստանի քաղաքացիական կռիվների կապակցությամբ<sup>10</sup>:

Կա նաեւ, մի այլ փաստ թուրք-դաշնակցական կապերի մասին, այդ խոսվածքային նախապատրաստման գործում: Կարմիր բանակի հրամանատարական կազմի ներկայացուցիչներին մեկը իր գեկուլցում հիշատակում է, որ մի հանդիպման ընթացքում Սովետական Հայաստանի մասին թուրքերը արտահայտվել են. «... բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները: Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն հաշվում որ Հայաստանը լինի Թուրքիայի հովանավորության տակ...»<sup>11</sup>:

Այդ հեղաշրջման փորձը փետրվարյան արկածախնդրությունն էր, որը, սակայն չկարողացավ արդարացնել թուրքական ոճրագործների հույսերը, չնայած նրանց կողմից դաշնակցականներին ցույց տրված ամեն տեսակի օգնությունը:

Ինչ խոսք, որ Թուրքիայի նման քաղաքականությունը խրախուսվում էր Անտանտի, առանձնապես Անգլիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք սիրաշահելով Թուրքիային, նրան պատերազմի էին հրահրում Սովետական Ռուսաստանի դեմ<sup>12</sup>, այդ պատճառով էլ Սեւրի դաշնագիրը չգործադրեցին ի շահ Թուրքիայի եւ նրա հետաքա ապաստիչ հանձնարարությունների համար:

Միթե՞ կասկած կա արեւմտյան իմպերիալիստական պետությունների (Անգլիայի եւ Ամերիկայի գլխավորությամբ) հակամարդկային եւ կործանարար քաղաքականության ու պատմական եւ ժամանակակից գործունեության մասին: Հարյուրավոր հատորներ դեռ կարելի է գրել նրանց մասին: Մարդ արարածը կամ հոգով ու սրտով կույր պիտի լինի, որ ակնաթող անի այդ փաստերը, կամ էլ գործակալության գուտ մոլորեց ռենեսանս:

Երբ դաշնակցականներին չի հաջողվում իրենց խոսվարարությունը ավարտի հասցնել, մասոնական Սիմոն Վրացյանը դիմում է Թուրքիայի մասոնականների պետության օգնությանը: Նա տեսակցություն է ունենում վերահիշյալ կապիտան Բահադդինի հետ: 1921 թ. մարտի 1-ին վերջինիս միջոցով Թուրքիայի ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղարկում, որի մեջ ասվում է.

«Հայրենիքի փրկության կոմիտեն»... խնդրում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն ազգերի փոխադարձ շահերի ըստ կարելույն շուտ՝

- 1- Երեւան վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին:
- 2-Տալ՝ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք զմանի հրացան կամ տանկական մաուզերի փամփուռներ, եւ կամ Ռոսի եւ Լեբելի սիստեմի հրացաններ:
- 3-Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն եւ եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով եւ ի՞նչ ժամանակամիջոցում:

<sup>9</sup> - ՍՄԿՊ Կենտկոմին կից ՄԷԼՍ ինստիտուտի Հայկական Ֆիլիալի արխիվ, 11-րդ բանակի վերաբերող նյութեր, կապուկ 4, գ. 1, թ. 103:  
(Հ. Էյչերեկյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 96):


<sup>10</sup> - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, Ֆ. 4/114, գ. 102, թ. 22:  
<sup>11</sup> - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, քաղվածքների Ֆանդ, 2-րդ մաս, գ. 352, թ. 285:  
<sup>12</sup> - Դիվանագիտական պատմություն, (ռուսերեն), հատոր 3, Մոսկվա, 1945, էջ 9-100:

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից եւ որոնք խանգարվել էին բոլշևիկների իշխանության ժամանակ»<sup>13</sup>:

Կրկնակի ազգային դավաճանություն 3 ամիսների ընթացքում՝ 1920 թ. դեկտեմբերի 2 եւ 1921 թ. մարտի 1:

Դաշնակցական-Թուրքիայի համագործակցության կապերի ամենապարզ եւ խոսուն փաստերից է Պրոմեթեի դաշինքը որը 1921 թվականին սաղմնավորվեց Թավրիզում նույն Ս. Վրացյանի եւ քեմալականների միջեւ եւ 1926 թվականի դեկտեմբերի 29-ին ստորագրվեց Կ. Պոլսում<sup>14</sup>:

Մյուս կողմից դաշնակցականները դիմում են անգլո-ֆրանսիական եւ ամերիկյան իմպերիալիստների ու Իրանի խաների օգնությունը: Սակայն, ոչ մի օգնություն: Դա արդեն շատ ուշ էր:



Ալ. Մյասնիկյան

Խռովության ճնշումից հետո Հայաստանի Ռազմահեղուկներ վերակառուցվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ), որի նախագահ նշանակվեց Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925): Նա Հայաստան եկավ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումով: Մինչ այդ նա արդեն ճանաչված գործիչ էր եւ Բելառուսում ու Ռուսաստանում ձեռք էր բերել ղեկավար աշխատանքի մեծ փորձ: Չնայած իր կարճատեւ (չուրջ մեկ տարի) գործունեությանը, նա մեծ դեր խաղաց Հայաստանում քաղաքական յարվածության մեղմացման, հայ մտավորակա-նությունը Հայաստանում համախմբելու, երկիրը խաղաղ շինարարության ուղի փոխադրելու գործում: Այնուհետեւ Ալ. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս (Անդրկովկասյան Դաշնություն): 1925 թ. նա գրհվեց ինքնաթիռի վթարից<sup>15</sup>:

\*\*\*

Ձանգերգուրի բոլոր շրջանները գրավելուց հետո, կարմիր բանակի գործառնները 1921թ. հուլիսի 13-ին բոլոր կողմերից գրոհեցին Գեովագի (Մեղրի, Արեւելք) կենտրոն՝ Մեղրի գյուղի վրա եւ գրավեցին այն: Այսպիսով ամբողջովին խորհրդայնացավ Ձանգերգուրը, որից հետո ավարտվեցին քաղաքացիական կռիվները Հայաստանում:

Սակայն 1921 թ, դաշնակցականների կազմակերպված փետրվարյան խռովությունը, որը քաղաքացիական կռիվի մեջ քաշեց առանց այն էլ քայքայված երկիրը, զգալի վնաս հասցրեց նաեւ արեւմտահայ գաղթականության հարցի շուրջակալի լուծմանը:

Փետրվարյան այդ խռովությունը նորանոր աղետներ պատճառեց բազմաչարչար հայ ժողովրդին: Բացի այդ, նրա լիկվիդացման օրերին, զոհ գնալով դաշնակցականների տարածած լուրերին ու սպառնալիքներին, ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորներ, թողած տուն ու տեղ, անցան Պարսկաստան: Խորհրդային Հայաստանի կառավարությունն ստիպված էր մի կողմ թողնել իր շինարար աշխատանքները եւ ձեռնամուխ լինել դաշնակցական «Հայրենիքի փրկության կոմիտեի» դիկտատուրայի լիկվիդացմանը, իսկ դրանից հետո՝ Երեւանից եւ այլ վայրերից Պարսկաստան անցան փախստա-կանների վերադարձի կազմակերպմանը:

Սարսափահար փախստականները սկզբում մտադիր էին մնալ Ձանգերգուրում, բայց այնտեղ ընկնելով անողոք սովի եւ թշվառությունների հորձանուտը խուճապահար շարժվում էին դեպի Պարսկաստան: Յոթ-ութ հազար հոգի Ղարաղաղի վրայով մեկնում են Թավրիզ, մի մասն էլ՝ կիսամերկ ու անոթի, մտում է սահմանի մոտ, Արաքսի ափին: Ձանագան ավազակախմբեր կողոպտում են նրանց մինչեւ վերջին շապիկը, շատերը խեղդվում են գետն անցնելիս կամ սովամահ լինում: Թավրիզ մեկնածները, կարճ ժամանակում վերջնականապես համոզվում են, որ փրկության ոչ մի ելք չունեն, եթե ոչ տուն վերադարձը, ուստի շուտով ետ են գալիս Ջուլֆա եւ այնտեղից խնդրում Խորհրդային Հայաստանի կառավարությունը՝ հնարավորություն տալ իրենց վերադառնալու հայրենի օջախները եւ գրավելու խաղաղ աշխատամքներով<sup>16</sup>:

1921 թ. ապրիլի 25-ից սկսած Արաքս գետի տարբեր հատվածներով, գլխավորապես Մեղրի գյուղի վրայով Պարսկաստան է անցել ավելի քան 8,000 փախստական: Այդ փախստականների մեծամասնությունը կենտրոնացել էր Թավրիզում եւ նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսի վերջերից Հայաստանի խորհրդային կառավարության ջանքերով սկսվեց փախստականների հայրենադարձությունը եւ մայիս-հուլիս ամիսներին հայրենիք էր վերադարձել շուրջ 4,000 հոգի:

